AZG NEW 1.QXD 7/21/2009 11:31 PM Page 1

# Ազգ
Azg

22 ՅՈՒԼԻՍ 2009 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 136 (4272)

ISSN: 1829-1651

## Չմիավորման շարժման գագաթաժողովը հաստատել է ազգերի ինքնորոշման սկզբունքի գերակայությունը

ԵՐԵՎԱՆ, 21 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Եգիպտոսի Շարմ- էլ-Շեյխ քաղաքում հուլիսի 15-16-ը անցկացված Չմիավորման շարժման (Հայաստանը կազմակերպությունում ունի դիտորդի կարգավիճակ) 15-րդ գագաթաժողովն ընդունել է հռչակագիր, որը հաստատում է ազգերի ինքնորոշման սկզբունքի գերակայությունը: Հռչակագրում տարբերություն է հասկացվում ազգերի ինքնորոշման սկզբունքին՝ տարածքային ամբողջականության սկզբունքի մասին հիշատակում անգամ չանելով:

«Չմիավորման կազմակերպության պետությունների եւ կառավարությունների ղեկավարները շարունակում են աջակցել բոլոր ժողովուրդների հիմնարար եւ անօտարելի ինքնորոշման իրավունքին, ներառյալ բոլոր ոչ ինքնակառավարվող տարածքները, ինչպես նաեւ օտար օկուպացիայի կամ գաղութային եւ օտար իշխանության տակ տարածքները: Ազգերի ինքնորոշման սկզբունքը կենսական է եւ կարեւորագույն գործոն է նմանապես բոլոր իրավիճակներն արմատախիլ անելու եւ ապահովելու համար մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներն ու ազատությունները», ասված է հռչակագրում:

Փորձագետների գնահատմամբ՝ հռչակագրում օգտագործված բառապաշարը, որի տակ ստորագրել են Իսլամական կոնֆերանս կազմակերպության գրեթե բոլոր անդամները եւ եռակի անգամ շատ պետություններ, քան 2008 թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի տխրահռչակ բանաձեւին կողմ քվեարկածները, գալիս է ապացուցելու, որ Ադրբեջանի սեփական ժողովրդին մոլորեցնելու ջանքերն արդեն չեն կարող արդյունք տալ, նույնիսկ եթե դրանից նավթի կամ էլ գազի հոտ է գալիս:

Չմիավորման շարժման կազմակերպությունը, որը ստեղծվել է 1961թ., այժմ միավորում է 119 պետություն: Պետությունների՝ այս կազմակերպության մեջ ընդգրկման հիմնական սկզբունքը որեւէ ռազմական բլոկի չանդամակցելն է: Դիտորդի կարգավիճակ ունեն 16 պետություններ, ինչպես նաեւ 5 միջազգային եւ 2 ազգային-ազատագրական կազմակերպություններ: Ներկայում կազմակերպությունում նախագահում է Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը:

## Տնտեսական անկումը առաջին կիսամյակում կազմեց 16,3 տոկոս

*Թեեւ միայն հունիսին մայիսի համեմատ գրանցվել է կտրուկ՝ 39,7 տոկոս տնտեսական աճ*




Համաձայն ազգային վիճակագրական ծառայության օպերատիվ տվյալների, այս տարվա հունվար-հունիս ամիսներին Հայաստանում գրանցվել է 16,3 տոկոս տնտեսական անկում: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 83,7 տոկոսը կամ մոտ 1 տրիլիոն 119 մլրդ դրամ: Առաջինը, որ աչքի է ընկնում այս ցուցանիշների մեջ, տնտեսական անկման տեմպի դանդաղումն է: Եթե հունվարին տնտեսական անկումը կազմել էր 0,7 տոկոս, հունվար-փետրվարին՝ 3,7 տոկոս, հունվար-մարտին՝ 6,1 տոկոս, հունվար-ապրիլին՝ 9,7 տոկոս, հունվար-մայիսին՝ 15,7 տոկոս, ապա վերջինիս համեմատ հունվար-հունիսին անկումն արդեն ավելացել է ընդամենը 0,6 տոկոսով: Եթե սրան ավելացնենք, որ հունիսին մայիսի նկատմամբ գրանցվել է էական՝ 39,7 տոկոս աճ, ապա կարելի է պնդել, որ մեր տնտեսությունը սկսում է դուրս գալ ճգնաժամից:

Մեր նախորդ հրապարակման մեջ («Երբ կդադարի խորանալ տնտեսական անկումը», 9 հուլիսի, 2009) կանխատեսել էինք, որ յուրաքանչյուր հաջորդ ամիս նախորդ ամսվա նկատմամբ կարձանագրվի տնտեսական աճ, ինչը փաստորեն ակնհայտորեն արձանագրվել է հունիսին: Նույն հրապարակման մեջ նշել էինք, որ հուլիսին հունիսի նկատմամբ աճն արդեն նկատելի կլինի եւ այժմ դրան կարող ենք ավելացնել, որ հուլիսի ցուցանիշների շնորհիվ հունվար-հուլիս ամիսներին տնտեսական անկման ցուցանիշը կսկսի կայունանալ եւ գուցե նաեւ նվազել:

Ըստ տնտեսության ճյուղերի, 2009-ի հունվար-հունիսին պատկերը հետեւյալն է: Արդյունաբերության անկումը կազմել է 11,5 տոկոս, իսկ միայն հունիսին մայիսի նկատմամբ արձանագրվել է 2 տոկոս աճ: Առանց էլեկտրաէներգիայի արտադրության, արդյունաբերության անկումը կազմել է 12,2 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը հունվար-հունիսին նվազել է 11,6 տոկոսով, իսկ հունիսին մայիսի նկատմամբ նույնպես աճ է գրանցվել՝ 6,4 տոկոսով:

Տես էջ 3

## Պատվոգրեր խաղաղապահներին

Հայաստանը միջազգային անվտանգության ձեւավորման գործընթացի մասնակից է եւ պատասխանատվությամբ է մոտենում անվտանգության համակարգերի ձեւավորմանը: Մայրաքաղաքային գնդում ՀՀ, ԱՄՆ եւ Լեհաստանի կառավարությունների կողմից Հայաստանի խաղաղապահ ուժերի մի խումբ զինծառայողներ երեկ պարգեւատրվեցին պետական գերատեսչական պարգեւներով: Զինծառայողների մի մասը խաղաղապահ առաքելությունն իրականացրել է Իրաքում, մյուս մասն էլ՝ Կոսովոյում:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Հայ խաղաղապահներն առանձնահատուկ են իրենց պարտականություններում՝ ընդգծված նվիրվածությամբ եւ արհեստավարժությամբ: Հայ զինծառայողները հրաշալի զինվոր են եղել յուրաքանչյուր վայրում, որտեղ մենք համատեղ պարապմունքներ ենք անցկացրել», ասաց Կանզասի ազգային գվարդիայի ղեկավար, գեներալ-ադյուտանտ, գեներալ-մայոր Թոդ Բանթինգը:

Տես էջ 3

## Ահմեդ Դավութօղլու. Այն, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղում, օկուպացիա է

ԱՆԿԱՐԱ, 21 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Այն, ինչ տեղի է ունենում Լեռնային Ղարաբաղում վերջին 17 տարիների ընթացքում, օկուպացիա է: Այս մասին Թուրքիայի հանրային հեռուստատեսությամբ հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն:

«Հայերի շրջանում կա այն համոզմունքը, թե Լեռնային Ղարաբաղում օկուպացիայի շարունակության պայմաններում կարելի է հասնել որեւէ կարգավիճակի: Սա օկուպացիա է: Ոտնահարվել են միջազգային իրավունքի օրենքները»,- հայտարարել է Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը՝ նշելով, որ պետք է կարեւորել Թուրքիայի ներդրումը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խնդրի կարգավորման բանակցություններում:

Դավութօղլուն միեւնույն ժամանակ հայտարարել է, որ Թուրքիան հարաբերություններ ունի Կովկասում բնակվող էթնիկական բոլոր խմբերի հետ եւ երբեք չի աջակցելու էթնիկական կամ կրոնական բախումներին:

«Լեռնային Ղարաբաղում ստատուս քվոն օգտակար չէ ինչպես Թուրքիայի, այնպես էլ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերությունների համար»,- ասել է Դավութօղլուն:

## ՀԱՄԱՌՈՏ

### «Ալիեւի եւ Սարգսյանի բանակցություններն սպասվում են Մինսկի խմբի աշնանային հանդիպումից հետո»

ՄՈՍԿՎԱ, 21 ՀՈՒԼԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի արտգործնախարարության պաշտոնական ներկայացուցիչ Անդրեյ Նեստերենկոն լրագրողներին հայտարարել է, որ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահները բանակցությունների հերթական փուլը կարող են անցկացնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշնանային հանդիպումից հետո:

Ըստ ՌԻԱ «Նովոստի»-ի հաղորդման՝ Նեստերենկոն ասել է, որ «ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներն աշնան ընթացքում նախապատրաստական աշխատանքի նոր փուլ կանցկացնեն, ինչից հետո կարելի է սպասել Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների եւս մեկ հանդիպում»:

### Իրանը «Նաբուկկոյին» մասնակցելու պատրաստակամություն է հայտնել

ԹԵՀՐԱՆ, 21 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Իրանի գազի ազգային ընկերության ղեկավար Ազիզալլա Ռամազանին հայտարարել է «Նաբուկկո» գազատարի նախագծին իր երկրի մասնակցելու պատրաստակամության մասին:

«Ֆարս» գործակալությանը Ռամազանին հայտարարել է, թե հաշվի առնելով, որ «Նաբուկկոյի» վերաբերյալ համաձայնագիր ստորագրած երկրները բավարար ներուժ չունեն գազատարը լցնելու համար, Իրանի միանալը հույժ հավանական է թվում:

## Անտրամաբանական մոտեցում հակակարկտային համակարգի ընտրության հարցում

*94 տոկոս արդյունավետության համակարգի փոխարեն կառավարությունը նախապատվություն է տալիս մինչեւ 50 տոկոս արդյունավետության համակարգին*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Մի քանի օր առաջ Հայաստանի նախագահի գրասենյակում տեղի էր ունեցել խորհրդակցություն նվիրված երկրում հակակարկտային համակարգի ստեղծման ծրագրին: Նշենք, որ կառավարությունը, 2008-ի սեպտեմբերի 18-ի որոշմամբ, արդեն հաստատել է Հայաստանի տարածքում մթնոլորտային վտանգավոր երեւույթների վրա ակտիվ ներգործության համակարգի ստեղծման ծրագիրը: Որոշման մեջ նշվում էր նաեւ գործող եւ նոր ստեղծվող հակակարկտային գեներատորային համակարգերի տեղադրման նպատակով հողահատկացում կատարելու մասին: Այսինքն, նոր ստեղծվող համակարգը լինելու է, այսպես կոչված, գեներատորայինը: Չնայած որոշման մեջ անդրադարձ է կատարված նաեւ այլ համակարգերին եւ նրանց արդյունավետության ցուցանիշներին, ինչից երեւում է, որ գեներատորային համակարգը, մեղմ ասած, ամենաարդյունավետը չէ:

Կառավարության որոշման մեջ նախ հիշատակվում է, որ հակակարկտային ռազմականացված ծառայությունը ստեղծվել է 1964-ին: 1980-ականներին ուներ 11 հակակարկտային ռազմականացված կենտրոն՝ 60 հրթիռահրետանային մարտկոցով: Համակարգում աշխատում էին շուրջ 1700 մարդ: Հայաստանի այն ժամանակվա 15 վարչական շրջանի ավելի քան 1 մլն հեկտար ընդհանուր տարածքի վրա կատարվում էին կարկուտի դեմ պայքարի աշխատանքներ: Այդ աշխատանքները իրականացվել են ավելի քան 400 միավոր զենիթային հրանոթներով եւ շուրջ 100 միավոր հրթիռային կայանքներով: Մինչեւ 1992-ը հակակարկտային պաշտպանության աշխատանքների արդյունավետությունը, ըստ վիճակագրական տվյալների, կազմել է 94 տոկոս: Արդյունքում կարկտահարությունից վնասված տարածքները տարեկան նվազել են միջին չափով 20 անգամ, իսկ ստացված եկամուտները գերազանցել են ծախսերն ավելի քան 5 անգամ: Ծառայությունն իրականացրել է նաեւ ակտիվ ներգործության աշխատանքներ Սեւանի ավազանում տեղումների արհեստական ավելացման ուղղությամբ: Այս դեպքում ստացված եկամուտները գերազանցել են կատարված ծախսերը 8-10 անգամ:

Տես էջ 8

# «Բանակցային գործընթացում մsաhոգիչ sարr գոյություն չունի»

Երեկ sեղի ունեցավ Ազգային անվsանգության խոrhրդի նիսsը, ինչից hեsn Ազգային անվsանգության խոrhրդի fարsուղար Արթուr Բաղդասարյանը ներկայացrեց նիսsի օrակարգում fննարկված եrեf hարցերը: Առաջին եւ գլխավոր hարցը ղարաբաղյան hակամարsությունն էr եւ բանակցային փուլը: Արթուr Բաղդասարյանը hավասsիացrեց, nr բանակցային գործընթացն ընթանում է բնականոն hունով եւ այն եrեf գերակա սկզբունfները` Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, խնդրի կարգավորման պարագայում միջազգային անվsանգության երաշխիfներն ու ուղիղ կաm Լեռնային Ղարաբաղի եւ Հայասsանի Հանրաmեsության միջեւ մեզ hամար առանձնաhաsուկ նշանակություն ունեն: «Մադրիդյան սկզբունfների շrջանակներում բանակցային գործընթացը շաrունակվում է: Կա դրական առաջընթաց: ՀՀ-ն կողմնակից է Լեռնային Ղարաբաղի hիմնախնդրի խաղաղ, փոխզիջումային կարգավորմանը: Բանակցային գործընթացում nrեւիցե մsաhոգիչ sարr գոյություն չունի: Նախագաhների, եռանախագաhների յուrafանչյուr այց sարածաշrջան նmասsում է, nrmեսզի եղած խնդիրները fննարկվելով առաջ ընթանան», նկասեց Բաղդասարյանը:

Քննարկված երկrորդ hրասաm թեման վերաբերում էr թմrամոլությանը: Կազմվել է թմrամոլության եւ թմrամիջոցների դեմ mայfարի ազգային ծrագիr, nrի մշակումը mայմանավորված է նաեւ ՀՀ միջազգային mարsավորություններով, մասնավորաmես ԵՄ-Հայասsան hամագործակցությամբ:

«Ազգային ծrագիrը mարունակում է 9 ուղղություն` թմrամոլության դեմ mայfարի աշխասանfներից մինչեւ թմrամոլների բուժում, վերականգնում եւ այլն: Ընդունվել



է նաեւ 2009-12 միջոցառումների ծrագրի ցանկը. ենթադrում է 87 միջոցառում, ներգրավված են ՀՀ 15 գերասեsչություն, mեսական կառավարման մարմիններ: Սաhմանված է hսակ ժամանակացույց», sեղեկացrեց Ազգային անվsանգության խոrhրդի fարsուղարը: Բաղդասարյանի վսաhեցմամբ թմrամոլության դեմ mայfարը Հայասsանում գsնվում է իրավաmաh մարմինների ուշադrության կենsrոնում: Թեmես Հայասsանում վերոնշյալ hանցասեսակը շաs sարածված չէ, բայց, hաշվի առնելով hանցավորության sարածման միsումները Բաղդասարյանը hրասաm hամարեց ծrագրի մշակումը, hայեցակարգի ընդունումը եւ կոնկrեs mեսական միջոցառումների նախաmասrաստումը:

Օrակարգի 3-րդ hարցը վերաբեrում էr Հայասsանում մթնոլորsի եւ վsանգավոր մթնոլորsային եrեւույթների վրա ակsիվ ներազդեցության hայեցակարգի ընդունմանը: «Վերջին շrջանում sարերային աղեsները եւ մթնոլորsային վsանգավոր դrսեւորումները ոչ միայն ՀՀ, այլեւ շաs երկrներում մեծ ավերածությունների mաsճառ են դարձել: Այս hայեցակարգի ընդունմամբ լուծվում է երկու խնդիր: Կիիմնվի hակակարկsային mաշsmանվածության hամակարգ, nrն ունի ոչ միայն sեխնիկական, ռազմական, այլեւ sնsեսական եւ կիրառական նշանակություն ազգաբնակչության 60 տոկոսի hամար: Կմշակվի hաsուկ ծrագիr, կնախասեսվեն ֆինանսական աջակցություն, nrի նmասակն է մթնոլորsային վsանգավոր եrեւույթների դեմ hամակարգված mայfար իրականացնել: Համաmասախան hանձնարարական է sրվել արsակարգ իրավիճակների նախարարությանը: ՀՀ նախագաhը hանձնարարել է կառավարությանը hայեցակարգից բխող ծrագրի եւ միջոցառումների փաթեթի նախաmասrաստում եւ իրականացում»:

Անդրադառնալով Կիrո Մանոյանի` վերջեrս լrասվամիջոցներին արված hայsարարությանը, թե արցախյան hիմնաhարցում ազգային անվsանգության դիrfnrոշումը hիշեցնում է ադrբեջանական դիrfnrոշում, Արթուr Բաղդասարյանը mաsասխանեց. «Նման hայsարարություն չեմ լսել, դա hամարում եմ անhեթեթություն Մանոյանի կողմից: Իմ դիrfnrոշումը ՀՀ mաշsոնական դիrfnrոշումն է` hսակ mեsականորեն, մեr ազգի շաhերից բխող: Որmես կուսակցության ղեկավար, «Օrինաց երկիrը» բազմաթիվ hայsարարություններ է արել ու լավ կլիներ, nr Կիrո Մանոյանը այդ hայsարարություններին ծանոթանար», ասաց Բաղդասարյանը:

Քելբաջարում կրակոցների մասին աhազանգեr ստացել է նաեւ ազգային անվsանգությունը: Արթուr Բաղդասարյանը փասsեց, nr կրակոցներ չեն եղել. hնչեցված աhազանգը իրականությանը չի hամաmասախանում:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



# «Գրանդ Քենդին» կֆինանսավորի «Խաչագողի հիշատակարանի» նկարահանումը

**«Գrանդ Քենդի» ընկերությունը ֆինանսավորելու է Րաֆֆու hանrաhայs «Խաչագողի hիշասակարանը» վեmի նկարաhանումը: Այդ կաmակցությամբ երեկ ընկերությունում sեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ «Գrանդ Քենդիի» նախագաh Կարեն Վարդանյանը hայsնեց, nr սա երկrորդ դեmfն է (առաջինը եղել է «Սmանված աղավնին»), երբ Հանրային hեռուսաընկերությամբ էկրանավորվում է դասական սsեղծագործություն: Նոr ֆիլմի շնորhանդեսը sեղի կունենա նոյեմբերին: «Գrանդ Քենդին» ֆիլմի միակ ֆինանսավորողն է: Կարեն Վարդանյանը նշեց, nr sրամադrված գումարի չափը առեւsրային գաղsնիf է: Նա նաեւ ընդգծեց, nr այս ֆիլմը sարբերվելու է մինչ այժմ եղած կրիմինալ բնույթի սերիալներից: Ըսs Կարեն Վարդանյանի, մեզ mեsf են մեr ազգային hերոների մասին ֆիլմեr, nrոնf hայrենասիrական ոգի կմsցնեն hասարակության մեջ: «Գrանդ Քենդիի» ղեկավարը ցանկություն hայsնեց sեսնելու Սասունցի Դավթի, Գեւոrգ Մարզmեsունու, Գարեգին Նժդեhի մասին ֆիլմեr: Նrա կարծիfով` լավ կլինի, nr լինի mեսական գrաfնություն, nrը կոrոշի, թե ինչ կարելի է նայել երեխաներին եւ ինչը` ոչ:**

**«Խաչագողի hիշասակարանը» ֆիլմի ռեժիսոr Հrաչ Քեշիշյանը շեշsեց, nr սա առաջին դեmfն է, երբ գործարարը ամբողջությամբ ֆինանսավորում է ֆիլմի նկարաhանումը, եւ իr շնորhակալությունը hայsնեց Կարեն Վարդանյանին: Նա sեղեկացrեց, nr շուsով կսկսվեն նկարաhանման աշխասանfները: Ֆիլմը կլինի արկածային ժանrով, hամագործակցության mայմանավորվածություն կա «Ուզբեկֆիլմի» hեs, nrը Խոrhրդային Միության լավագույն կինոսsուդիաներից էr: Կինոնկարի սցենարի hեղինակը Արsակ Արզումանյանն է: Նկարաhանվելու են hայsնի դերասաններ, nrոնց անունները ռեժիսոrը դեռ չցանկացավ hայsնել: «Խաչագողի hիշասակարանը» լինելու է լիամեsrաժ ֆիլմ, nrը ցուցադrվելու է 4 կամ 5 սերիաներով: Հrաչ Քեշիշյանը նաեւ hայsնեց, nr առաջիկայում Հանրային hեռուսաsեսությամբ նախասեսվում են նկարաhանել կենսագրական ֆիլմեr Եղիշե Չարենցի եւ Խաչասուr Աբովյանի մասին: Իսկ «Խաչագողի hիշասակարանը» ֆիլմի mrոդյուսերը Մամիկոն Չաsինյանն է:**

Ա. Ս.

# Պասվոգրեր խաղաղապահներին

*1-ին էջից*

**Հայասsանում ԱՄՆ դեսmան Մ. Իվանովիչը նշեց, nr խաղաղաmաh ծառայությունը ամեն sեղ էլ դժվար խնդիr է, սակայն ծառայությունը կարող է իr արժանի գնաhասականը ստանալ:**



**«ԱՄՆ-ն բարձr է գնաhասում Հայասsանի ներդrումը hամաշխարhային անվsանգության աmաhովման ասmարեզում: Իrաfում sեղակայվել են Հայասsանի ավելի fան 380 զինվոrներ, սmաներ: Այս աջակցությունը իրականացվել է «Իrաfի ազասություն» գործողությանն օգնելու hամար», hավելեց նա:**

**Պաշsmանության նախարար Սեյrան Օhանյանը նշեց, nr անցած sարի` Կոսովոյում գsնվելու ժամանակ, ԱՄՆ գեներալը իրեն ասել է, թե ինfը կերազեr, nr մեr խաղաղաmաhները լինեին իr զինվոrները. այդ mաsասխանից նախարարը մեծ hmարsություն է զգացել:**

**Նախարարը նշեց, nr խաղաղաmաh բրիգադի hամալrման գործընթացը երկrորդ փուլի ավարsին է մոsենում. hամալrվել է մի fանի սsորաբաժանում, nrը շաrունակվելու է մյուս sարի: Իսկ ինչ վերաբերում է hայ խաղաղաmաhներին Աֆղանսsան ուղարկելուն, նա նշեց, nr այդ hարցով բանակցություններ են վարում Գերմանիայի Դաշնային Հանրաmեsության զինված ուժերի ղեկավարության hեs. «Բանակցություն ենf վարում Գերմանիայի ԶՈւ ղեկավարության hեs: Դrանից վախենալ mեsf չէ: Ասեմ, nr շաs զինծառայողներ, nrոնf Խոrhրդային Միության sարիներին Աֆղանսsանում ծառայել են, այսօr, կարծես, hերթ են կանգնել եւ ուrախությամբ ուզում են գնալ ու նոrից ծառայել: Կարծում եմ, nr այս sարվա վերջին այդ hարցը կլուծվի»:**

Ն. Մ.

# Թուրքական թատրոն` հայերի մասնակցությամբ, Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի գլխավորությամբ

Ռազմավարական ազգային hայկական hեsազոsական կենsrոնի (ՌԱՀՀԿ) նախագաh Ռիչարդ Կիrակոսյանը ՀՀ նախագաh Սերժ Սարգսյանի եւ Ադrբեջանի նախագաh Իլիամ Ալիեւի մոսկովյան hանդիmումից վsանգ չի ակնկալում: Սակայն hանդիmումը բացաhայsեց, nr ղարաբաղյան hակամարsության hեs կաmված ճնշում է զգացվում Ռուսասsանից, ԱՄՆ-ից եւ Եվrոmայից: «Ճնշումներն ավելի շաs mայմանավորված են ոչ թե ղարաբաղյան hիմնաhարցով, այլ Հայասsան-Թուrfիա բանակցություններով: Հայասsան-Թուrfիա ճանաmարhն, ի sարբերություն ղարաբաղյան hիմնախնդրի, ավելի արագ է զարգանում: Սակայն այս խնդիրները փոխկաmակցված են: Պաsաhական չէ, nr Ռուսասsանն ու ԱՄՆ-ն աջակցում են թուrfական դիվանագիsությանը», նկասեց նա:

Քաղաfագեsը վսաhէ է, nr Մինսկի խմբի ճնշումները չեն կարող լուծել ղարաբաղյան hիմնաhարցը. միակ ճանաmարhը ԼՂՀ-ի բանակցային կողմ կազմելն է: Կիrակոսյանը խոrhուրդ է sալիս չթերագնաhասել, նաեւ չգերագնաhասել մադrիդյան սկզբունfները: «Այդ սկզբունfները բանակցությունների արդյունf չեն նշանակում, այլ փասsաթուղթ են բանակցությունների hամար»:



ՖՈՏՈԼՈՒՐ

Թե nrfանով են մադrիդյան սկզբունfները hայանmաս` Ռիչարդ Կիrակոսյանն ասաց. «Որոշակի կեsեr Հայասsանի hամար բարենmաս են, nrոշակի կեsեr նmասsավոr են Ադrբեջանի hամար: Այդ սկզբունfները գrել են ոչ թե hայ կամ ադrբեջանցի mաշsոնյաներ, այլ արsաfին ուժերը: Սկզբունfները hիմf են բանակցությունների hամար: Անկեղծ ասած, այդ սկզբունfներն ինձ այժմ այնfան էլ չեն անhանգսsացնում: Մsաhոգիչ է, nr Հայասsանն այսօr ավելի թույլ է, fան երբեւէ: Դա ավելի մեծ վsանգ է, fան մադrիդյան սկզբունfները: Հայասsանը թույլ է ներfին mառակsության, ոչ լեգիsիմ կառավարության, իշխանության mաsճառով», ասաց ՌԱՀՀԿ sնorենը:

Անդրադառնալով մոսկովյան hանդիmումից երկու օr առաջ Ալիեւի` Լոնդոնում կասարած ռազմաsենչ hայsարարությանը, Կիrակոսյանը նկասում է, nr մեսիջն ուղղված էr ողջ աշխարhին: Իսկ hոկsեմբերին կայանալիf Թուrfիա-Հայասsան ֆուsբոլային hանդիmման վերաբերյալ Կիrակոսյանի sեսակեsը hեsեւյալն է. «Հայասsանը mաsrաս է, բայց Թուrfիան դեռ չգիsի ինչ անի, Թուrfիան դեռ չգիsի ինչ է ուզում: Նա զարմացած է, nrովhեsեւ թերագնաhասեց Ադrբեջանի ռեակցիան եւ գերագնաhասեց իr անձնական hնարավորությունները: Կա մեծ hնարավորություն hայ-թուrfական hարաբերությունների նորմալացման, բայց մեծ sարբերություն կա hարաբերությունների նորմալացման եւ վերաhասsեցման միջեւ»:

Ռիչարդ Կիrակոսյանը վսաhէ է, nr Սերժ Սարգսյանը կգնա Թուrfիա: Ճնշումներն էլ այս անգամ կլինեն Թուrfիայի վրա. սmասումներն ու ակնկալիfներն այս անգամ Թուrfիայից են: «Ռուսասsանն ու ԱՄՆ-ն գոh չեն մնա, եթե թուrfական այս թաsrոնը լավ ավարs չունենա»:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հrասարակութեան ԺԸ sարի

Հիմնադիr եւ hrասարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրաmեsութեան 47
ֆաfս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոr խմբագիr
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / hեռ 521635

Խմբագիr
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / hեռ 529221

Հաշվաmաhութիւն (գովազդ) / hեռ 582960

Լrագրողների սենեակ / hեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / hեռ 582483

***Շուրջօrեայ լrաhաւաf ծառայութիւն*** / hեռ 529353

Համակարգչային շարուածfը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արsասmումները smագիr մամուլի միջոցով, ռադիոhեռուսաsեսութեամբ կամ hամացանցով, առանց խմբագրութեան գrաւոr hամաձայնութեան խստիւ արգելւում են hամաձայն ՀՀ hեղինակային իrաւունfի մասին օrէնfի:
Նիւթերը չեն գrախօսւում ու չեն վերադարձւում:
Գ sառով յօդուածները գովազդային են, nrոնց բովանդակութեան hամար խմբագրութիւնը mաsասխանաsւութիւն չի կrում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/21/2009 10:29 PM Page 1



ԱԶԳ **Ղարաբաղյան հարց**

# Սարգսյան-Ալիեւ հանդիպումներում այս մանդատով, այս ձեւաչափով հեռանկար չկա

*Կարծում է Արամ Սարգսյանը*

Երեկ լրագրողների հետ հանդիպմեց Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ **Արամ Սարգսյանն** ու ներկայացրեց իր վերլուծությունները Մոսկվայում Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի վերջին հանդիպման շուրջը: «Շատ գիտակ մարդիկ ասում էին, որ Ալիեւ կրտսերից պետական, առավել եւս քաղաքական գործիչ ու ղեկավար դժվար ստացվի: Ես թերահավատ էի, որովհետեւ նա, բացի ամենից, բազմափորձ Հեյդար Ալիեւի որդին է: Բայց վստահ կարող եմ ասել, որ Իլհամ Ալիեւը մի շատ մեծ բացթողում ունեցավ այս վերջին հանդիպման ժամանակ: Երբ Մեդվեդեւը մի սեղանի շուրջն էր հրավիրել Ալիեւին, Բաղապշին եւ Կոկոյթիին, պրն Ալիեւը անուղղակիորեն ճանաչեց եւ՛ Հարավային Օսիայի Հանրապետությունը, եւ՛ Աբխազիայի, եւ՛, ինչո՞ւ չէ, անուղղակի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Եթե ինքը կարող էր այդ օրն ընկերանալ չճանաչված հանրապետությունների ղեկավարների հետ, ուրեմն կամաց-կամաց սովորում է, որ պետք է ընկերակցի նաեւ Բակո Սահակյանի հետ»:



«Իհարկե, կատարվածը շատ հիշարժան էր, նշեց պրն Սարգսյանը եւ անդրադարձավ հանդիպման երկրորդ դեմքին. երբ լրագրողները շատ խնդրեցին, որ Ալիեւը նորից սեղմի Սերժ Սարգսյանի ձեռքը, մի այնպիսի հաճույքով դա արեց, կարծեք թե ինչ-որ բան պատահել էր: Մանավանդ, երբ նա անընդհատ խոսում էր ռազմատենչ տրամադրություններով, հանկարծ այդպիսի սիրալիր լինելու բացատրությունը, կարծում եմ, մեկն է՝ այն սկանդալը, որ կայացավ Միացյալ Նահանգներում՝ հայր եւ որդի Ալիեւների հետ կապված, կարծում եմ, նա այն հոգեվիճակի մեջ է, որ դեռ չի կարողանում այդ վիճակից դուրս գալ»:

Անդրադառնալով բանակցությունների արդյունքներին, պրն Սարգսյանը համոզված էր եւ այդ մասին ԴԿ-ն հայտարարություն արել էր, որ որեւէ փաստաթուղթ ստորագրել չէր կարող, ուղղակիորեն չէր կարող, որովհետեւ այդպիսի լիազորություն հայկական կողմը չուներ: Իսկ նորացված փաստաթղթերը, որոնք բանակցությունների ընթացքում գաղտնի են պահվում, անհրաժեշտ էր քննարկել հանգիստ մթնոլորտում, գտնում էր պրն Սարգսյանը: Ի դեպ, ԴԿ-ի տարածած վերջին հայտարարության մեջ, ինչպես նշեց պրն Սարգսյանը. «ԼՂՀ-ի հիմնահարցի գլխավոր սկզբունքային խնդիրը կարգավիճակի հարցն է, եւ եթե այդ խնդիրը չի կարգավորվում ի սկզբանե, չի կարող կարգավորվել ոչ մի ուրիշ հարց: Եվ ուրախ ենք, որ այս հարցում ԴԿ-ի դիրքորոշումը համընկնում է հանրապետության նախագահի դիրքորոշման հետ: Իսկ բանակցություններում ԼՂՀ-ի մասնակցությունը, շարունակեց պրն Սարգսյանը, որեւէ մեկի մոտ այլեւս կասկածի առարկա չի դառնում եւ դա առաջիկայում լինելու է գլխավոր խնդիրը: Այդ մասին ԼՂՀ-ի արտգործնախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ նշված էր, որ իրենք պետք է մասնակցեն բանակցությունների բոլոր փուլերին, որը շատ կարեւոր էր»: Պրն Սարգսյանի կարծիքով, «հեռանկար այս բանակցություններում այս մանդատով, այս ֆորմատով չկա: Չի կարող լինել այն պարզ պատճառով, որ առաջին հերթին կողմերի մոտեցումները բեւեռացված են, մյուս կողմից՝ երկու ժողովուրդների միջեւ չկա վստահության մթնոլորտ: Քանի դեռ վստահության այդ մթնոլորտը չեն ձեւավորել պետական այրերը եւ հասարակական, քաղաքական գործիչները, այդպիսի լուծումներ ղարաբաղյան հարցում չեն սպասվում: Հեռանկարը կլինի այն ժամանակ, երբ Ադրբեջանում այլեւս չեն ստեղծի հայի կերպարը որպես թշնամի, Հայաստանում կսկսենք հարմարվել, որ մենք ադրբեջանցիների հետ պետք է ունենանք բարիդրացիական հարաբերություն, եւ կունենանք տնտեսական հարաբերություններ: Միայն տնտեսական ինտեգրացիայի եւ մյուս-մյուս շփումների շնորհիվ մենք կկարողանանք որոշակի մթնոլորտ ձեւավորել: Եվ ես կարծում եմ, այն՝ ինչ որ հիմա արվում է, ավելորդ խաղեր են, ժամանակի վատնում, որը կարող է շարունակվել եւս տասը տարի»:

Լրագրողների հարցին, թե ԼՂՀ-ի հարցում էներգետիկ գործոնն ավելի մեծ դեր չի՞ խաղում, ասաց. «Մենք պետք է վիրավորվենք, որ մեզ փորձում են ներկայացնել աղքատ, անկարող, աններուժ երկիր, եւ որոշենք, թե ինչ կարող ենք դրա փոխարեն անել: Այո, ունենք էներգակիր պաշարներ, բայց դա չի նշանակում, որ մենք պետք է դա մեզ համար համարենք բարդույթ, որը չենք կարողանում հաղթահարել: Պետք է ճիշտ օգտագործել ինտելեկտուալ կարողությունները»: Իսկ այն հարցին, թե Ադրբեջանը պատա՞նդ է ԱՄՆ-ի ձեռքում, պրն Սարգսյանը նշեց. «Իհարկե, պատանդ է», ասաց, որ ԱՄՆ-ում այդ 10 տարի առաջ եղած սկանդալը պատահական չէր հենց այս պահին ջրի երես հանել ու դատապարտել Ալիեւներին՝ կաշառք ստողին: «Սա միայն ու միայն քաղաքական դրդապատճառներ ուներ եւ ամերիկացիները ցույց տվեցին, որ շատ դժգոհ են նրանցից: Փորձեց վազել Լոնդոն, որ այնտեղից Ամերիկայի վրա ազդեն՝ դա էլ չստացվեց, ու գնաց մի հիմար հայտարարություն արեց, որ պատերազմով կհասնի իր ուզածին... Իհարկե, պատանդ է: Եվ կարեւորն այն է, որ մենք ճիշտ օգտագործենք նրանց այդ դժվարությունները»:

**«Ազգը»** հարցրեց, թե ադրբեջանցիները մշտապես պնդում են տարածքների վերադարձման պահանջը, իսկ մենք պնդում ենք, որ այդ հողերում արյուն է թափվել եւ մեր պատմական հողերից մի թիզ անգամ չենք զիջի, ինչպե՞ս եք տեսնում այս հարցի լուծումը: «Ես համոզված եմ, որ այդ տարածքների խնդիրն արդեն մեկընդմիշտ լուծված է այնքանով, որ ԼՂՀ-ն իր սահմանադրությամբ դա ընդգրկել է իր սահմանների մեջ: Ասեմ, որ այն տարածքները, որ այսօր համարենք, թե ԼՂՀ-ի վերահսկողության տակ են, համազոր են եւ համազոր չեն այն տարածքներին, որոնք մնացել են Ադրբեջանում որպես հայկական հողեր: Էլ չեմ խոսում Նախիջեւանի մասին ու զարմանում եմ մեր իշխանությունների վրա, որ 20 տարի Կարսի պայմանագիրը թողել են մի կողմ ու ոչ մի կերպ չեն ուզում անդրադառնալ Նախիջեւանի խնդրին, համարելով, որ եկեք էսքանը մարսենք, հետո դրա մասին մտածենք: Էդպես չի լինում: Եթե սկսել ենք ազգային ազատագրական պայքարը, իսկ դա այդպես էր, ուրեմն դա պետք է տրամաբանական շարունակություն ունենար: Ես կարծում եմ, որ տարածքների մասին խոսելն ավելի շատ պետք է անհանգստացնի Ադրբեջանին, քան Հայաստանին: Ուղղակի մեր իշխանությունների սխալ քաղաքականության պատճառով մենք ենք փորձում մեզ արդարացնել: Ես բազմիցս ասել եմ, թե ով էր խանգարում մեր արտգործնախարարությանը նմանատիպ բանաձեւեր ընդունել ՄԱԿ-ում: Աշխատել էր պետք, այլ ոչ թե անգրագետ մարդկանց ուղարկել դեսպանատներ, որոնք անգամ լեզվին չեն տիրապետում»:

Իսկ այն հարցին, թե օգոստոսին Ադրբեջանը պատերազմ էր ծրագրել, պրն Սարգսյանը զարմացել էր, որ այդ պատմությունը լրագրողներին հայտնի էր, սակայն այդ մասին որեւէ մեկը չէր նշել, ու հիմա տեղեկացրեց. «Ես համապատասխան լրատվություն ունեի, որ այն օրերին, երբ Սաակաշվիլին սկսեց իր պատերազմը Օսիայի դեմ եւ պետք է կատարեր իրեն տրված ռազմական ծրագիրը եւ փակեր ռուսներին միջանցքից այն կողմ, ադրբեջանցիներն օգտվելով այդ առիթից, պիտի սկսեին հարձակումը Հայաստանի վրա չորս տարբեր ուղղություններով: Ինձ հարցրին, թե ինչո՞վ էին նրանք հիմնավորելու, ես ասացի, թե նրանք վաղուց արդեն հիմնավորել էին՝ օգտվելով մեր իշխանությունների, մեր արտգործնախարարության պասսիվ քաղաքականությունից, այսինքն՝ նրանք ունեն միջազգային ատյանների բանաձեւեր, որտեղ Հայաստանը հայտարարված է ագրեսոր, որը օկուպացրել է, ինչպես ասում էր Վ. Օսկանյանը, իրենց տարածքները եւ այլն: Եվ նրանք շատ հստակ կհիմնավորեին, եթե Սաակաշվիլու ավանտյուրան ստացվեր, նրանք ասելու էին՝ էդ ինչո՞ւ վրացիներին կարելի է, մեզ չի կարելի: Եվ համոզված եմ, որ դա լինելու էր հետեւյալ կերպ՝ Հայաստանի վրա հարձակվելով, ստիպելով հայերին զորքերը Ղարաբաղից դուրս բերել, որպեսզի պաշտպանեն Հայաստանը եւ իրական հարձակումը կատարելու էին ԼՂՀ-ի վրա: Ես ուզում էի, որ մեր իշխանությունները հասկանան՝ յուրաքանչյուր տարբերակի պետք է պատրաստ լինեն: Եթե անվտանգության խորհրդի անդամի մտքով չի անցնում, որ կարող է նաեւ այսպիսի տարբերակ կիրառվել եւ այդ տարբերակը չի էլ քննարկվել անվտանգության խորհրդում, ինչի՞ մասին է խոսքը: Ինչո՞ւ նախապես չեն գաղտնազերծել, եւ այլն, եւ այլն»:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

# «Գերտերությունները Արցախի հարցի լուծումը ծառայեցնում են սեփական նպատակներին»



**Այն, ինչ կատարվում է այժմ Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, այն իրավիճակը, որ կա, ըստ «Միացում» նախաձեռնության անդամ Ժիրայր Սեֆիլյանի, առաջացել է 2000 թվականից, Քի Վեսթից, Փարիզից, մինչեւ մադրիդյան սկզբունքներ: Ժիրայր Սեֆիլյանը երեկ Մամուլի ազգային ակումբում ներկայիս իրավիճակի պատասխանատու համարեց «քոչարյանասերժական» ռեժիմին, իսկ Դաշնակցությանն էլ հարցնում է, թե ո՞ւր էին նրանք նախորդ տասը տարիներին:**

**Ստեփանակերտում կազմակերպված ՀՅԴ խորհրդաժողովը, որ վերաբերում էր Ղարաբաղի խնդրին եւ որտեղ հնչել են իշխանության քաղաքականությունը քննադատող գնահատականներ, ըստ Սեֆիլյանի, կազմակերպվել է Սերժ Սարգսյանի եղբոր՝ Սաշիկ Սարգսյանի հովանավորությամբ: Ժիրայր Սեֆիլյանը նաեւ ապացույցներ ունի, որ խորհրդաժողովը կազմակերպվել է Սերժ Սարգսյանի հրահանգով:**

**Որպես ապացույցներից մեկը Ժիրայր Սեֆիլյանը մատնանշում է խորհրդաժողովի ընդունած բանաձեւի տեքստի բովանդակությունը:**

**«Բանաձեւում դուք չեք գտնի ազատագրված բառը: Գոյություն չունի: Երկար բանաձեւ է, խոսում է արցախյան խնդրի մասին, տարածքների մասին, վերադարձնել-չվերադարձնելու մասին, սակայն ազատագրված բառ գոյություն չունի», ասում է Ժիրայր Սեֆիլյանը, հիշեցնելով, որ դեռ տարիներ առաջ է Սերժ Սարգսյանը պաշտպանության նախարարի կարգավիճակով ասել, որ այդ տարածքները ազատագրված չեն:**

**Ժիրայր Սեֆիլյանը նշում է, որ աշխարհաքաղաքականության կենտրոնները Ղարաբաղի պատերազմում տեսնելով հայ ժողովրդի հզորության ներուժը, կայացրել են որոշում՝ կանխել հայոց պետականության զարգացումը, ինչին էլ ականատես ենք լինում Ղարաբաղի հարցում: Ժիրայր Սեֆիլյանը նկատում է նաեւ, որ այդ ծրագիրը սկսել է իրագործվել 1999 թվականի հոկտեմբերի 27-ից, եւ ծրագրի հեղինակները, ըստ նրա, ոչնչացնում են հայ ժողովրդի կամքի կենտրոնները: Ըստ Ժիրայր Սեֆիլյանի, ներկայիս բարոյալքված իշխանությունն ի վիճակի չէ դիմագրավելու մեր պետականության ոչնչացմամբ սպառնացող այդ վտանգին եւ ծրագրին, ու ելքը իշխանափոխությունն է:**

**Ի դեպ, Ժիրայր Սեֆիլյանը արտահայտվելով որեւէ տարածքային զիջման դեմ, ասում է, թե պետք է բանակցել Ադրբեջանի հետ, սակայն այդ բանակցությանը պետք է բարձրացնել Նախիջեւանի եւ Գարդմանքի հարցը: Ժիրայր Սեֆիլյանի կարծիքով, եթե Հայաստանն ուզում է տնտեսապես զարգանալ, ապա վաղ թե ուշ պետք է իր ենթակայության տակ վերցնի Նախիջեւանը:**

**Հարցին, որ եթե Հայաստանը չստորագրի մադրիդյան սկզբունքները, չի՞ լինի պատերազմ, Ժիրայր Սեֆիլյանը տալիս է բացասական պատասխան, ասելով, թե թող մեզ պատերազմով չվախեցնեն, բայց միեւնույն ժամանակ, այն բարոյալքումը, որ կա մեր ներքին կյանքում, ըստ Սեֆիլյանի, մեզ առանց պատերազմի էլ կհարկադրի ծնկի գալ եւ զիջել ամեն ինչ, եւ դա է, նրա կարծիքով, գլխավոր մտահոգությունը:**

**Ժիրայր Սեֆիլյանը նշեց, որ իշխանությունը վարձում է մտավորականների, ակադեմիկոսների, արվեստագետների, որոնք քարոզում են, թե պետք է Ղարաբաղի հարցում պետք է գնալ զիջումների:**

**«Ես ուզում եմ խորհուրդ տալ Սերժ Սարգսյանին՝ դադարեցնել այս արշավը, որ սկսել է հայ ժողովրդի դեմ: Եթե ոչ, մենք եկող օրերին փորձելու ենք կանխել այս արշավը ինչ-որ չափով, ոչ ստանդարտ ձեւերով»:**

**Լրագրողները հարցրեցին, թե ինչպես է մնում մի ընդդիմության կազմում, որի առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ տարածքային զիջման կողմնակից է: Ժիրայր Սեֆիլյանն ասաց, թե կարող են ընթերցել մադրիդյան սկզբունքների վերաբերյալ Հայ ազգային կոնգրեսի հայտարարությունը, որտեղ նշվում է, որ այդ սկզբունքները դավաճանական են: Ժիրայր Սեֆիլյանը նաեւ հայտարարեց, որ ընդդիմության մեջ գերիշխում է Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Ժիրայր Սեֆիլյանի, ոչ թե Լեւոն Տեր-Պետրոսյանի մոտեցումը: Ն. Մ.**

# Տնտեսական անկումը առաջին կիսամյակում կազմեց 16,3 տոկոս

*1-ին էջից*

**Գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է 2,5 տոկոսով, բայց այս ճյուղում հունիսին մայիսի նկատմամբ զգալի՝ 61,4 տոկոսով աճ է արձանագրվել, ինչը պայմանավորված է այս տարվա բարձր բերքատվությամբ: Մանրածախ առեւտրում այս տարվա հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զրոյական աճ, իսկ հունիսին մայիսի նկատմամբ՝ 7,2 տոկոս աճ: Եվ վերջապես ծառայությունների ոլորտում հունվար-հունիսին արձանագրվել է աճ՝ 0,9 տոկոսով: Միայն հունիսին մայիսի նկատմամբ աճն այստեղ կազմել է 11,8 տոկոս:**

**Ամենամեծ անկումը շարունակվում է արձանագրվել շինարարության ոլորտում՝ այս անգամ 55,5 տոկոսով: Այդուհանդերձ, հունվար-հունիս ամիսներին այդ անկման տեմպը փոքր-ինչ նվազել է, քանի որ հունվար-մայիսին անկումն այստեղ 56,1 տոկոս էր: Այդ փոքրիկ դրական առաջընթացը պայմանավորված է եղել հունիսին մայիսի նկատմամբ շինարարության ծավալների ռեկորդային՝ 130,8 տոկոս աճով:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը այս տարվա առաջին կիսամյակում կազմել է 1 մլրդ 659 մլն դոլար եւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 31,5 տոկոսով: Արտահանումը կազմել է 281 մլն դոլար՝ նվազելով 45,9 տոկոսով, ներմուծումը 1 մլրդ 387 մլն դոլար՝ նվազելով գրեթե 27,5 տոկոսով: Արտաքին առեւտրաշրջանառության մեջ, այս տարի առաջին անգամ հունիսին նախորդ ամսվա համեմատ նկատվել է աճ՝ 44,2 տոկոսով: Հունիսին մայիսի նկատմամբ արտահանման ծավալներն ավելացել են 37,9 տոկոսով եւ ներմուծմանը՝ 45,7 տոկոսով:**

**Պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվն ավելացել է 10,3 տոկոսով: Միջին աշխատավարձն ավելացել է 12,7 տոկոսով, կազմելով մոտ 98 հազար դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմել է մոտ 81 հազար դրամ, մասնավորում՝ մոտ 122 հազար դրամ:**

**Այսպիսով, թեեւ Հայաստանում տնտեսական անկումը շարունակվում է, բայց հունիսին արձանագրված ցուցանիշները վկայում են, որ հեռու չէ կայունացման եւ անկման տեմպերի նվազման շրջանը: Ինչպես արդեն նշեցինք, այդ գործընթացը թերեւս կսկսվի արդեն մեկ-երկու ամիս հետո:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW 4.QXD 7/21/2009 10:30 PM Page 1



# Դրվագներ կյանքային առօրյայից

### Դպրոցական «կապիտալ»՝ ծնող-կոմիտեի բարոյականությունից

Այս տարվա շրջանավարտ ունեցող ծնողները վերջապես թոթափվեցին մի ծանր բեռից՝ դպրոցական ավարտական փաթեթից: Մյուսները թող պատրաստվեն իրենց հերթին, որ շուտով, սեպտեմբերից կսկսվի դրամահավաք-գլխապտույտներով եւ արտադպրոցական պարտադիր պարապմունքներով՝ շրջանառության մեջ մտած ընդհատակյա բուհական ցանցում (ամսական 20.000-35.000 դրամ եւ ավելի վճար յուրաքանչյուր առարկայի համար): Անկախ ԿԳ նախարարության տարբեր որոշումներից, կրթական համակարգը իր ներքին կանոնները է ձեւավորել եւ գրեթե անխափան իրականացնում է ամեն տարի: Ավարտական դասարանի աշակերտները արտադպրոցական պարապմունքների պատճառով ուս. տարվա կեսից գրեթե չեն հաճախում դպրոց: Իսկ մարտ-ապրիլ ամիսներից սկսվում է վերջին զանգի եւ ավարտական արարողությունների իրարանցումը, որ ծնող-կոմիտե կոչված հիմնականում տնային տնտեսուհիների քաղքենի մի խումբ արտակարգ հաջողությամբ գլուխ է բերում: Այս խմբի իրարանցման հիմնական ձգտումը դպրոցի տնօրենության աչքին իր նվիրվածությունն ամեն կերպ ի ցույց հանելն է: Ավարտական դրամահավաքը դրա եզրափակիչ փուլն է: Որքան էլ կրթության եւ գիտության նախարարությունից հրահանգներ իջեցվեն այդ դրամահավաքներն արգելող, այս հնարամիտները քողարկված այլ ձեւեր կգտնեն, ստեղծելով մի վիճակ, թե տնօրեն, դասղեկ, ուսուցիչ կապ չունեն. «Բա տասը տարի սովորել են, մի շնորհակալությո՞ւն էլ չհայտնենք»: Այդ շնորհակալությունը հայտնելու՝ ամեն դպրոց իր ձեւերն է մշակել: Նախկինում դրանք հիմնականում ոսկյա զարդեր էին. այժմ ավելի պրակտիկ՝ կանխիկ դրամ, որ տարբեր դպրոցներում տատանվում է 35.000-80.000, ներառյալ վերջին զանգը եւ ավարտական հանդեսախնջույքը, հիմնականում ռեստորանային:



Ամենահաս ծնող-կոմիտեի հայեցողությամբ դրամը երբեմն բաշխվում է՝ ուսուցիչներին տեսակավորել-որակավորելով, երբեմն ավելի պարկեշտորեն՝ հավասար հիմունքներով, բացառությամբ, իհարկե, տնօրենության, որի հանդեպ առանձին վերաբերմունք կա: Այս ամենը, անշուշտ, կամավոր հիմունքներով է կատարվում: Բայց գործում է հիմնականում «Ինչ կմտածեն, եթե չմասնակցեմ, իսկ երեխան ինչքան վատ իրեն կզգա» հոգեբանությունը: Բայց, թերեւս, այդ շնորհակալությունն էլ մեր ընդհանուր կյանքին ու մտայնությանը շատ հարիր է, եթե պահանջվելիք գումարի չափը պարկեշտության սահմաններում տեղավորվեր: Բայց խնդիրն այնքան գումարը չէ, որքան այն բարոյականությունը, որ կրում են ծնողներից ոմանք, ովքեր հնարամիտ աճպարարի պես ամեն ինչ անում են, բայց ի հաշիվ մյուսների: Աչքաբաց քաղքենու իրենց ներքին բավարարվածությանը հագուրդ տալով, հասնելով ծայրաստիճան մանրախնդրության, անշուշտ, փայփայելով նաեւ իրենց ջանքերն արդյունավորելու հույսը, այն է՝ տարեվերջյան քննություններին իրենց երեխաների հանդեպ բարձր գնահատականի բարեհաճությունը... Հայ քաղքենուհու այս դասը նախ որոշակի մթնոլորտ, մենթալիտետ է դպրոցում ձեւավորում, ապա՝ մեթոդներ մշակում: Մինչ դրամահավաքը հեռախոսազանգերով այնքան հոգիդ կհանի, որ դժվար է տեղի չտալ մեղրածոր, ծեքծեքուն այդ շոուին: Արդեն անկարեւոր է, թե նախարարության ղեկավարությունը տեղյա՞կ է դպրոցական կյանքում գործող իրականությանը, կարեւորը, որ մենք մասնակիցը եւ, կարելի է ասել, զոհն ենք դրա: Վերջում՝ այդ կանանց մի սովորության մասին եւս, որ նրանց բարոյականության մասն է կազմում. մինչ փող հավաքելը սրանք այնքան ակտիվ ու պարտաճանաչ են, պատրաստ անգամ երեկոյան ուշ ժամին փողի հետեւից տունդ գալու, սակայն դրանից հետո քար լռություն. մտքներով էլ չի անցնում, որ հարկ է եւ պատշաճ մյուս ծնողներին ինչ-որ բանի (կատարվածի) մասին տեղեկացնելը:

### Անթույլատրելի անփութություն

Սուրբ գրքի շատ հրատարակություններ են նվիրատվությամբ մարդկանց բաժանվում: Վերջին շրջանում շրջանավարտներից շատերն ուսուցչական բարեմաղթությունների հետ «Նոր կտակարան» են ստանում: Խորհրդանշական է: Կյանք մտնող պատանին կամ պարմանուհին Աստծու պատվիրանային օրհնությունը հետը տանում է: Շատ դպրոցներում այս սովորույթն ավանդույթի է վերածվում: Այս տարի դպրոցներից մեկում շրջանավարտներին հանձնվեցին «Նոր կտակարան», «Գիրք սաղմոսաց», «Գիրք առակաց» գրքից օրինակներ: Գրքի դարձերեսին կարդում ենք. «Այս նոր կտակարանը նուէր է Հայաստանի ժողովուրդին միջազգային Մկրտչական միսիոնարական միութեան կողմէ եւ պէտք չէ ծախուի»:



Նվերը պատշաճ է, որ շնորհակալությամբ ընդունվի: Այսուհանդերձ, չենք կարող շրջանցել. գրքի անորակ տպագրությունը (եւ սա՝ պոլիգրաֆիայի, գրատպագրության բավականին զարգացած հայաստանյան ներկա պայմաններում): Նախ՝ կազմարարական անփութությունը, առաջին էջից իսկ ճեղքերով, իսկ հաջորդող 28 էջերի վերին ձախակողմյան հատվածի տեքստն անընթեռնելի է՝ թղթի ծուռ ու անհավասար կտրվածքի պատճառով: Դժվար է հավատալ, որ այսպիսի վերաբերմունքի կարող է արժանանալ անգամ «Նոր կտակարանը»: Կարծում ենք, անհայտ այս տպագրիչները պետք է, որ իրենց մասնագիտությունը փոխելու մասին մտածեն:

### Սրճարանային բիզնեսի թվացյալ մանրուքներ




Երեւանյան թեժ ամռանը քաղաքացիներիս միակ սփոփանք այգիները վաղուց դադարել են այդպիսին լինելուց: Մարդկանց զրկել են ուղղակի անվճար հանգստանալու հնարավորությունից. նստարանները քիչ են, կանաչն էլ գնալով քչանում է: Բացօթյա սրճարանները, բնականաբար, ավելի պահանջարկ են ունենում, հատկապես կանաչապատ վայրերում գտնվողները: Օղակաձեւ զբոսայգում դրանք բավականին շատ են, որոնցից մեկը՝ Զարենցի հուշահամալիրի հարեւանությամբ, երեւանյան ամառային սրճարանների սովորական միջավայր-հարդարանքով: Բացառությամբ, որ այս մեկը նստատեղի երկու տեսականի է առաջարկում (այսպիսիք էլի կան), սովորական սեղան, աթոռով եւ մյուսը՝ բազմոց, բազկաթոռով, փոքրիկ հաճելի սեղաններով, ծղոտանման հարդարանքով:

Անշուշտ գրավիչ են: Մոտենում ես. սեղաններին անգլերեն խոշոր տառերով VIP գրությունը զգուշացնում է, որ այս հարմարավետության համար առանձին պիտի վճարել, ինչպես մի շարք այլ ժամանցի վայրերում, երբ, օրինակ, կենդանի երաժշտություն է մատուցվում, եթե անգամ գլխացավանք է պատճառում, պիտի վճարես: Սովորաբար այդպիսի բաները 500 դրամի սահմաններում են լինում: Բայց ահա մոտենում է մատուցողուհին եւ զգուշացնում, որ այդ բազմոցի միայն նստելավարձը 1500 դրամ է: Իրենք էլ գիտեն, թե ինչ գին են դրել, նախապես են զգուշացնում:

Ի դեպ, երկու ժամվա ընթացքում որեւէ մեկը VIP-ում չնստեց:

### Կուսակցական չեղած բարոյականություն (սովորական բան)

Վաթսունհինգն անց մի կին տրտնջում էր հերթական խաբվածությունից, չնայած կյանքի հարուստ փորձառությանը: Կուսակցական էր դարձել, այդ կուսակցության անցյալի՝ դեռեւս «փառքի» շրջանում, որից շատերը վաղուց հիասթափվել ու դուրս են եկել: Տիկինը իր բախտը փորձել է քաղաքապետական վերջին ընտրություններին, չնայած առաջացած տարիքին՝ ակտիվորեն մասնակցել միեւնույն կուսակցության ծրագրին եւ քարոզչություն ծավալել՝ նաեւ վստահված անձի պարտականությունները արել որպես աշխատանք, վճարովի հիմունքներով: Սակայն, ավա՜ղ, խեղճը հուսահատված, խաբված է մնացել: Ճիշտ ժողովրդական ասացվածքի պես է ստացվել. «Մինչեւ առուն ջուր գա, գորտի աչքը դուրս կգա»: «Էս տարիքիս էքան վազվզեցի, աշխատեցի, փողը չտվեցին՝ պատճառաբանելով, թե իրենց թեկնածուն չի անցել (մնում էր, որ անցներ): Որ անցներ էլ, միեւնույն է, չէին տալու, աշխատելաձեւ է»: Մեկ ամսից ավելի է անցել, բայց խաբվածության վիրավորանքը չի անցնում, երեւի չանցնի էլ, սպիհանա, մնա:

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Խաղատները շատ գայթակղիչ են դարձել երիտասարդների համար

Անկախության առաջին տարիներին, երբ մութն ու ցուրտը մտել էին մեր հոգիներն ու մեզ խեղճացրել, ոմանք հենց այդ օրերին չգիտես թե ինչպե՞ս ու ի՞նչ գումարներով հարստացան... Չէ, սիրելի ընթերցող, շատ էլ լավ գիտենք, այն էլ մանրամասն: Արդեն 16 տարի է անցել այն օրից (1993 թ. նոյեմբեր), երբ ռուսական ռուբլուն եկավ փոխարինելու անկախ երկրիս դրամը: Յուրաքանչյուրիս 5000 դրամ փոխեցին, որն այն ժամանակ բավականացրեց 1 կգ միս, 1 լիտր կաթ, 4 հաց, 1 կգ պանիր գնելուն: Եվ ինձ պես շատերը, որոնք քիչ թե շատ բարեկեցիկ կյանքով էին ապրում, հայտնվեցին անհասկանալի մի իրավիճակում: Եվ քանի որ մենք՝ հայերս ամեն տեսակ իրավիճակներից դուրս գալու ելքը գտնում ենք, այս անգամ էլ լուծումը գտանք՝ տանը եղած արժեքավոր իրերը վաճառելով, որ սոված չմնանք ու երեխաները քիչ թե շատ կուշտ լինեն 200 գրամ յուրաքանչյուրին հասկացված հացի կտորով: Բայց հենց այս օրերին գուցե կզարմանաք, թե ինչո՞ւ այսքան տարի հետ գնացի, ոմանք հենց մեր կողքին, կտրուկ հարստացան: Սկզբում սեղանիկներ, բենզինի վաճառակետեր, իսկ հետո էլ խաղատներ բացելով: Մինչեւ հիմա էլ հարցական է մնացել, թե նրանց էլ 5000 դրամ փոխեցին, ապա ինչպե՞ս եղավ, որ հարստացան, իսկ մենք... Հենց այդ հարստացողները քաղաքի տարբեր մասերում տներ, խանութներ, ռեստորաններ գնեցին, տարին 2 անգամ շատ թանկարժեք մեքենաներ էին առնում, մի քիչ օգտագործում ու վաճառում... Շատ ու շատ այլ բաներ կարող եմ թվարկել, սակայն ասելիքս դա չէ, այլ այն, որ հենց այդպիսիների «երեսից» երիտասարդության մի ստվար հատված շեղվեց ու խաղամոլության մոլուցքով տարվեց՝ մոռանալով տուն, ընտանիք, անգամ երեխաներին: Շատացան նաեւ անչափահասների գողությունները (սկզբից իրենց տնից, հետո՝ բարեկամների ու հարեւանների), որպեսզի կարողանան վճարել խաղատան պարտքերը եւ այդպիսով ներքաշվեցին հանցագործ խմբերում ու դատապարտվեցին կյանքի լավագույն տարիները ճաղերի հետեւում անցկացնելու: Իհարկե, այդպիսիների թիվն այնքան էր շատացել, որ ստիպված եղան որոշում կայացնել խաղատները քաղաքից 25 կիլոմետր հեռու վայրերում գործելու մասին: Ու այդ որոշումից հետո սնկի պես, կողք կողքի «աճեցին» խաղատները: Իսկ թե ի՞նչ գումարներով եւ կամ որտեղի՞ց այդ գումարները, եւ ինչո՞ւ հենց խաղատներում աշխատող 40-ից ավելի մարդկանցից միայն 3-4-ն են փաստաթղթով գրանցված աշխատող, պարզ չէ... Եվ ինչո՞ւ նրանց վրա հսկողություն չկա: Ոչ ոք չի ցանկանում պատասխանել այս ինչուներին ու պատասխանատվություն կրել: Գուցե պատճառն այն է, որ ամեն մի խաղատան թիկունքին մի իշխանավոր է կանգնած, ու հենց նրանք էլ թաքցնում են եկամուտները...

Բայց որ այսօր այդ խաղատները գայթակղում են երիտասարդներին, դրսից հայտնի երգիչ-երգչուհիներ բերելով, որոնք միայն իրենց խաղատներում են համերգային երեկոներ կազմակերպում, դարձել է շատ մտահոգիչ:

Խմբագրությունը բազմաթիվ հեռախոսազանգեր է ստանում հատկապես խաղամոլությամբ տառապող երիտասարդների կանանցից, մայրերից, որոնք ակնկալում են այս խնդրի շուրջն աղմուկ բարձրացնել, որն էլ գուցե ինչ-որ չափով կարգելի ու կկանխի նման գայթակղիչ, գայթախեղիչ երեւույթները: Սակայն չենք կարծում, որ խաղատներից ահռելի գումարներ ստացող տերերին հուզում է մեր երկրի երիտասարդների վիճակը, եւ օրեցօր գերշահույթ ստանալու համար նրանք դիմում են ամեն տեսակ գործունեության: Իսկ թե ի՞նչ անդրադարձ կունենա այդ խաղատների տերերի վրա կառավարության նոր որոշումը, որում նշված է, որ 2013-ի հունվարի 1-ից խաղատներ կգործեն միայն Ջերմուկ, Ծաղկաձոր եւ Սեւան քաղաքներում, պարզ կլինի հետո: Իսկ այժմ դրանք գործում են քաղաքի ծայրամասերում, հաճախ բնակավայրերին շատ մոտ, որը կրկին օրենքի կոպիտ խախտում է:

Բայց դե մեր երկրում ո՞վ է օրենքով շարժվում եւ կամ օրենքը թղթի վրա է միշտ մնում ու գործում է միայն խեղճերի ու թույլերի համար: Եվ այստեղ է, որ մտաբերում ես ժողովրդական հայտնի խոսքը. «Տերովին տերն է տարել, անտերին՝ գելը»:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**

AZG NEW 5.QXD 7/21/2009 10:30 PM Page 1





# Վլադիմիր Պուտին. «Նորմալ չէ, երբ գարեջուրն էժան է խմելու ջրից»

Հանրահայտ է, որ հարբեցողությունը Ռուսաստանի մեծագույն սոցիալական, ժողովրդագրական չարիքներից մեկն է: Վերջերս այդ սուր խնդրի վրա ուշադրություն հրավիրեց ռուս ուղղափառ եկեղեցին: Իսկ օրերս նոր առաջարկությամբ երկրի վարչապետին դիմեցին Ռուսաստանի պառլամենտի վերին պալատի ներկայացուցիչները՝ նրա հետ հանդիպման ժամանակ:

Հայտնի է նաեւ, որ հարբեցողությունը միանշանակ երեւույթ չէ: Մի կողմից նա հոգեւոր, բարոյական ու ֆիզիկական դեգրադացիայի է ենթարկում անհատին: Սակայն, մյուս կողմից, ոգելից խմիչքների արտադրությունն ու վաճառքը հսկայական եկամուտներ են բերում, եւ հարց է առաջանում՝ ո՞ւմ: Խորհրդային կոմունիստները, տարբեր ժամանակներ զանազան տարբերակներով պայքարելով հարբեցողության դեմ, միեւնույն ժամանակ չէին զլանում պետբյուջեն հարստացնել «ալկոհոլային» եկամուտներով (նույնիսկ դրա միջոցով իրագործել սոցիալական ծրագրեր): Ահա եւ հիշյալ հանդիպման ընթացքում Դաշնային խորհրդի սենատորները առաջարկեցին որպես «պայքարի» միջոց վերականգնել նախորդների արդյունավետ պրակտիկան՝ ոգելից խմիչքների արտադրության ու վաճառքի պետական մենաշնորհը:

Որպես կանոն, պետական նման բարձր մակարդակի հանդիպումները հանպատրաստից տեղի չեն ունենում. քննարկվելիք բոլոր հարցերը նախապես հրազեկվում ու համաձայնեցվում են: Եվ սենատորների փաստարկներին Պուտինի տված պատասխանը հոժարակամ ու հեռագնա էր. «Իրոք նորմալ չէ, երբ գարեջուրն էժան է խմելու ջրից: Աշխարհի ոչ մի երկրում նման բան չկա»:

Պետդումայի կոմունիստները, ինչպես ասվեց, ելնելով իրենց երբեմնի «հարուստ» փորձից, դեռեւս Ելցինի օրոք պահանջում էին դիմել նման քայլի, որպեսզի միլիարդավոր ռուբլիները մտնեն ոչ թե անհատ գործարարների (ժուլիկների), այլ պետության գրպանը: Սակայն անիշխանության այն քաոսային տարիներին դա դժվար էր իրականացնել: Ներկա իրադրությունում, ըստ երեւույթին, շարժիչ ուժ է ծառայում ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Ամենայն հավանականությամբ Ռուսաստանում կվերականգնվի ոգելից խմիչքների արտադրության ու վաճառքի պետական վերահսկողությունը, ընդ որում կգերիշխի ոչ այնքան բարոյական, որքան պրագմատիկ մոտեցումը: Պուտինի հետ հանդիպումը երեւի ազդանշան էր սպիրտի օլիգարխներին, քանզի նա պառլամենտականներին առաջարկեց պատրաստել համապատասխան օրենսդրական նախաձեռնություններ:

Արդ, իսկ ինչո՞ւ նման բան չի կարելի անել Հայաստանում: Երեւի Ազգային ժողովում էլ կգտնվեն մարդիկ, ովքեր ելնելով պետության շահերից ու թեկուզ «որոշ» գործընկերների նկատմամբ տածած թաքուն նախանձից, հանդիպում պահանջեն երկրի վարչապետի (կամ թեկուզ նախագահի) հետ եւ իմաստուն խորհուրդ տան դիմել պետբյուջեն հարստացնելու պատմականորեն արդարացված միջոցին: Թատերակա՞ն կլինի այդ միջոցառումը: Հետո ինչ: Բայց դրա փոխարեն բյուջետային ի՜նչ ճեղքվածքներ կփակվեն: Ի դեպ, դրա հաշվին թերեւս թուլանա միջին բիզնեսի վրա գործադրվող հարկային նյութահոգեմաշ աննախադեպ ճնշումը, որն ի վերջո կարող է դառնալ նույնիսկ հայոց քաղաքացիական հասարակության (միջին խավի) գերեզմանափորը:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# WSJ-ը ներողությո՞ւն է խնդրել Սաակաշվիլուց

Արտահայտությունը, թե «Բանականությամբ Ռուսաստանը չես հասկանա», լիովին օգտագործելի է Ռուսաստանի հետ բարդ հարաբերություններ ունեցող Վրաստանի ներկայիս նախագահի՝ Միխեիլ Սաակաշվիլու հանդեպ: Հիրավի, վրաց նախագահը ամենայն հանգստությամբ կարողանում է իրարամերժ հայտարարություններ անել ու դեռ հանգիստ լինել, թե իրականությունը հենց իր խոսքերում է:

«**Ազգը**» երեկ անդրադարձել էր The Wall Street Journal հայտնի պարբերականում Վրաստանի նախագահի հարցազրույցին եւ ներկայացրել Սաակաշվիլու խոսքերը, թե Վրաստանի՝ մոտ ժամանակներում ՆԱՏՕ-ին եւ Եվրոմիությանը անդամակցելու, ինչպես նաեւ Աբխազիան եւ Հարավային Օսիան վերադարձնելու հույսերը «գրեթե մեռած» են: Երեկ Վրաստանի նախագահը երկրի խորհրդարանում հայտարարել է, թե The Wall Street Journal-ը ներողություն է խնդրել իրենից՝ անճշտությունների համար:

Մասնավորապես, ըստ Սաակաշվիլու, հարցազրույցում ոչ թե խոսվել է «գրեթե մեռած» հույսերի մասին, այլ Վրաստանի նախագահը ասել է, որ եթե Ռուսաստանն իր գործողություններով հասնի ՆԱՏՕ-ին Վրաստանի անդամակցությանը խոչընդոտելուն, դա ողբերգություն կլինի:

Իսկապես դժվար է հասկանալ, թե ինչն է «թյուրըմբռնման» պատճառը, եթե իսկապես դրսեւորել է The Wall Street Journal-ի աշխատակիցը: Միայն նշենք, որ Միխեիլ Սաակաշվիլին տիրապետում է անգլերենին եւ հարցազրույցը հաստատապես վերցվել է անգլերենով եւ ոչ վրացերենով, իսկ անգլերենին հաստատապես տիրապետում է նաեւ The Wall Street Journal-ի թղթակիցը:

**Ա. Հ.**

# Սխեֆեր. «Ուկրաինան եւ Վրաստանը պատրաստ չեն միանալու ՆԱՏՕ-ին»

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Յաապ դե Հոոպ Սխեֆերը, որի պաշտոնավարության ժամկետն ավարտվում է օգոստոսի 1-ին, խոստովանել է, որ Վրաստանը եւ Ուկրաինան ներկայումս պատրաստ չեն անդամակցելու ՆԱՏՕ-ին: Սխեֆերը այդ մասին հայտարարել է հուլիսի 21-ին Մեծ Բրիտանիայում, որտեղ գտնվում է «հրաժեշտի այցելությամբ»:

«Միայն ցանկությունը ինքնաբերաբար անդամակցելու իրավունք չի տալիս», ակնարկել է Սխեֆերը, որի խոսքերը մեջբերում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը: Նրա կարծիքով, այդ երկրների եվրատլանտյան ծրագրերին խանգարում է դրանց ներքաղաքական իրադրությունը:

Ըստ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի, այսօր ոչ Ուկրաինան, ոչ էլ Վրաստանը չեն համապատասխանում դաշինքի բոլոր պահանջներին:

Բրյուսելում թերահավատ են Ուկրաինայի եւ Վրաստանի անդամակցության հարցում, քանի որ Ուկրաինայում շատ ուժեղ են հակաարեւմտյան տրամադրությունները, իսկ Վրաստանում իրավիճակն էլ ավելի խճճվեց 2008-ի վրաց-ռուսական պատերազմից հետո: Այս տարի ՆԱՏՕ-Ռուսաստան շփումների վերականգնումից հետո Վրաստանի անդամակցության հարցը դարձավ էլ ավելի խնդրահարույց:

# «Ալ Ջազիրան» վերսկսեց աշխատանքը Պաղեստինում

Պաղեստինյան ինքնավարության իշխանությունները քաթարյան «Ալ Ջազիրա» արբանյակային հեռուստաընկերությանը թույլատրել են վերսկսել աշխատանքը ինքնավարության տարածքի մի մասում՝ Այսրհորդանանում: Վերջինս մնում է ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասի եւ նրա «Ֆաթհ» շարժման ենթակայության տակ:

«Ալ Ջազիրայի» պաղեստինյան գրասենյակի աշխատանքի վերսկսման մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Միեւնույն ժամանակ նշվում է, որ Պաղեստինի ղեկավարությունը չի հրաժարվել «ստահոդ լուրերի» տարածման համար «Ալ Ջազիրային» դատի տալու մտադրությունից: Այդ մասին գործակալության թղթակցին հայտնել է տեղեկատվության նախարարության աղբյուրներից մեկը:

Այսրհորդանանում «Ալ Ջազիրայի» հաղորդումների հեռարձակումը դադարեցվել էր հուլիսի 15-ին՝ այն սյուժեի ցուցադրությունից հետո, որտեղ ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը մեղադրվում է Յասեր Արաֆաթին սպանելու համար Իսրայելի հետ գործակցած լինելու մեջ: Արաֆաթը 2004 թ. մահացել էր Փարիզում, 75 տարեկան հասակում: «Ազգը» գրել է, որ «Ֆաթհ» շարժման համահիմնադիր Ֆարուկ Քադդումին մինչեւ օրս պնդում է, որ Արաֆաթին թունավորողներից մեկը եղել է Մահմուդ Աբբասը: Օգոստոսի 4-ին տեղի կունենա «Ֆաթհի» համագումարը, եւ նման պնդումները լրջորեն սասանում են Աբբասի դիրքերը:



# Բլոգ՝ Իրանում հայկական վանքերի տեղեկություններով



*Սուրբ Ստեփանոսի վանք*

**ՅՈՒՆԵՍԿՕ-ի ինտերնետային կայքից «Դիաս դել Ֆուտուրո Պասադո»-ին պատկանող բլոգը վերցրել է եզակի նկարներ եւ տեղեկությունների մի շարք հուշարձանների մասին, որոնք հայերիս համար սիրված պատմական վայրեր են, ընդգրկված հատուկ նշանակության շինությունների «Համաշխարհային ժառանգություններ» ցուցակում:**

**Միջնադարյան Հայաստանի այս վանքերը՝ Սուրբ Թադեոսը (Թադեի), Սուրբ Ստեփանոսը եւ Ձորձորը (մատուռ), գտնվում են Իրանի հյուսիսային լեռնաշղթաների շրջանում, այժմ անմարդաբնակ, լքված հովիտներում: Մոտակայքում ապրում են քուրդ եւ ազերի գյուղացիներ: Հայեր չկան: «Առաջին հայացքից զարմանալի կթվա շատերին, որ Հայաստանից հեռու, օտար մահմեդական այս վայրերում նման հայակերտ վանքեր են կառուցվել, սակայն պատմությանը ծանոթանալուց հետո պարզ է դառնում, որ դրանք ոչ թե Հայաստանից հեռու են կառուցվել, այլ Հայաստանն է հեռացել նրանցից», գրված է բլոգի բացատրությունում:**

**Նկարներին կից տեղադրված քարտեզը ցույց է տալիս, որ վանքերը կառուցված են եղել պատմական Հայաստանի կենտրոնական մասում՝ Վասպուրականում, հայ ժողովրդի բնօրրանում: Դրա արեւելյան մասում գտնվել է Թավրիզը՝ առեւտրի դարպասը Մարկո Պոլոյի ժամանակներում, իսկ վերեւում՝ Արաքսի մի կողմում, Ջուլֆան՝ պարսկական մետաքսի ճանապարհը:**

**Ըստ ավանդության, Ս. Թադեի վանքը հիմնադրվել է 66 թվին՝ Քրիստոսի 12 առաքյալներից Հայաստանում քրիստոնեության առաջին քարոզիչներից Թադեոս առաքյալի կողմից, նախկին հեթանոսական տաճարի տեղում: Պատմահայր Մովսես Խորենացու պնդմամբ, առաքյալը նաեւ այնտեղ է թաղված: 1324-ի երկրաշարժից հետո վերանորոգվել է, եւ իր սեւ ու սպիտակ քարերի համար տեղացիներն անվանել են «Կարա քիլիսե» (սեւ եկեղեցի):**

**Սուրբ Ստեփանոսի վանքը հիշատակվում է 7-րդ դարից, բայց կառուցվել է շատ ավելի վաղ Բարդուղիմեոս առաքյալի կողմից: Տեղաբնակները կոչել են «Կիզիլ քիլիսա» (ոսկե եկեղեցի) իր փայլուն, բաց շագանակագույն քարերի արձակած շողերի պատճառով: Վանքից մի քանի կիլոմետր այն կողմ դեռ կարելի է տեսնել հայկական վերջին գյուղի՝ Դարաշամբի ավերակները: Դարաշամբը հայաբնակ գյուղ է եղել Իրանի Մակու գավառում: 1916-ին ունեցել է 280 բնակիչ, որոնք զբաղվել են երկրագործությամբ եւ անասնապահությամբ: Նրանց մեծ մասը Խորհրդային Հայաստան է ներգաղթել 1928-ին, մնացածը՝ 1946-ին:**

**Ձորձոր մատուռը ամենաքիչ հայտնին է, կառուցվել է մոտ 10-րդ դարում եւ վերանորոգվել 1324-ի երկրաշարժից հետո:**

**Հ. Ծ.**



*Ձորձոր մատուռ*

# Կանադահայոց թեմը նշել է հիմնադրման 25-ամյակը

**Կանադայում լույս տեսնող ԹՄՄ «Ապագայ» շաբաթաթերթի հունիսի 22-ի համարը տեղեկացնում է, որ կանադահայոց թեմը նշել է իր հիմնադրման 25-ամյակը (1984-2009 թթ.), եւ այդ առթիվ գումարել է պատգամավորական իր 26-րդ ժողովը Օտտավայում գտնվող Կանադայի խորհրդարանի շենքում մայիսի 29-31-ին: Տեղի են ունեցել նաեւ թեմի «հոգեւորականաց» եւ «եկեղեցասեր տիկնանց միությունների» համագումարները, որից հետո հոգեւորականների դասն ու պատգամավորները այցելել են ՀՀ դեսպանատուն, որտեղ նրանց ընդունել է հավատարմատար Արման Հակոբյանը:**

**Պատգամավորական ժողովը նախագահել է կանադահայոց առաջնորդ Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը: Ժողովականները հոտնկայս ունկնդրել են Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի օրհնության եւ բարեմաղթության խոսքերը, որից հետո ելույթներով հանդես են եկել Մյուռոն քահանա Սարգսյանը եւ ծխական խորհրդի ատենապետ Արտաշես Գունտագճյանը: Հաջորդաբար ներկայացվել են տարբեր միությունների տարեկան հաշվետու տեղեկությունները, որից հետո թեմական խորհրդի անդամներ են վերընտրվել Արա Պոյաճյանն ու Հրանտ Չիթաքը, իսկ նոր անդամներ՝ Վիգեն Տարագճյանն ու Շահին Սոհելին: Հոգեւորականներից վերընտրվել է Հայրիկ աբեղա Հովհաննիսյանը:**

**Հաջորդ օրը «Մարիոթի» շքեղ սրահում տեղի ունեցած ճաշկերույթ-հանդիսության ընթացքում սրբազան հոր ձեռամբ առաջնորդարանի Ա. կարգի «Ս. Խաչ» շքանշանով պարգեւատրվել են օտտավայաբնակ ազգայիններ Բարսեղ Աշըքյանն ու Ժան Ֆիլիպ Թաշճյանը՝ իրենց ազգօգուտ գործունեության համար:**

**Որոշվել է 2010-ի 27-րդ պատգամավորական ժողովն անցկացնել Համիլտոնի Ս. Աստվածածին հայոց եկեղեցու մեջ:**

**Հ. Ծ.**

AZG NEW 6.QXD 7/21/2009 10:32 PM Page 1





# Արսինե Խանջյան. «Հայաստանի իշխանությունները փորձում են ազատվել ցեղասպանության խնդրից, ինչ-ինչ տնտեսական խնդիրներ լուծելու պատրվակով»

«Հայոց ցեղասպանության թեմայով ֆիլմեր են նկարահանվում հիմնականում սփյուռքում: Հայաստանում այդ թեման կինոմատոգրաֆում չի արծարծվում անգամ վավերագրական ժանրում: Մինչդեռ Հայոց ցեղասպանությունը հարկ է ներկայացնել՝ խուսափելու համար կրկնությունից եւ միմիայն նորագույն միջոցներով, որպեսզի հետաքրքրի ոչ միայն հայ, այլեւ օտարերկրացի հանդիսատեսին»,- երեկ կարծիք հայտնեց դերասանուհի **Արսինե Խանջյանը**: Նա հավատացած է, որ ժամանակակից միջոցներով ու հղկված մտածողության շրջանակներում ցեղասպանության խնդիրը ներկայացնելու անհրաժեշտություն կա, այլապես առանց այն էլ ոչ արդյունավետ օգտագործված ժամանակը լիովին կկորցնենք:



Մինչդեռ ցեղասպանության հետեւանքները հայության համար հաղթահարված չեն ու հարցն էլ դեռեւս կենսունակ է: Հապացույց դերասանուհին օրինակ բերեց. «Արցախում էի: Փոքրիկ խանութի պատուհանից հացավաճառից հաց խնդրեցի ու նա անմիջապես ճանաչեց: Հայության շրջանում այս լայն ճանաչումը կարծում եմ՝ մեծապես պայմանավորված է «Արարատ» ֆիլմի թեմայով: Դա էլ ապացույց է, որ Հայոց ցեղասպանության հարցն այսօր էլ հայության շրջանում արդիական է»:

Եվ այս համատեքստում էլ դերասանուհին, ում համար միանշանակ չէ հայապահպանության հարցը, ընդգծեց. «Շատ հաճախ տպավորություն եմ ստանում, որ Հայաստանի իշխանությունները փորձում են ազատվել ցեղասպանության խնդրից՝ ինչ-ինչ տնտեսական խնդիրներ լուծելու պատրվակով ու չեն էլ նկատում, որ այդկերպ աստիճանաբար կորցնում են հայկական սփյուռքը»:

Ի լրացումն ասվածի, Արսինե Խանջյանն անդրադարձավ հայապահպանության խնդիրներին, հայաստանյան իշխանությունների մոտեցումներում, ըստ իրեն, տեղ գտած առանցքային բացթողումներին ու սխալներին. «Մտահոգվում եմ արդեն 85 տարի իր հայկական ինքնությունը պահպանող սփյուռքի հայկական դպրոցների, ակումբների քանակի պակասելով ու խառն ամուսնությունների թվի աճով, սակայն հարկ է խորագույն մտահոգություն եւ գործնական քայլեր դրսեւորել ու ձեռնարկել՝ Հայաստան-սփյուռք հարաբերություններում առկա հոգեբանական խնդիրները լուծելու համար: Ռուսաստանի հայկական համայնքը, որ մեծաքանակ է, քանի՞ հայկական դպրոց ունի եւ որքա՞ն է այդ համայնքը պահպանում հայկական մթնոլորտ ու միջավայր: Այս առնչությամբ խոսք ու զրույց չկա»:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական տարփողվող երկխոսությանը նաեւ արվեստի գործիչների մակարդակով, ապա, ըստ Արսինե Խանջյանի, որպես հեռանկար մոտեցումն այդ ողջունելի է, բայց ներկայում անիրագործելի. «Հենց «Ոսկե ծիրան» կինոփառատոնին գիտե՞ք որքան ջանք է գործադրվում թուրք կինեմատոգրաֆիստների մասնակցությունն ապահովելու համար, իսկ հայկական մասնակցություն թուրքական նմանատիպ միջոցառումներում չի էլ ենթադրվում: Սա վառ փաստ է, որ իրականությունն է արտացոլում, ինչը մենք իրատեսորեն չենք գնահատում»:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Թելեթոնին հանգանակվեց 100.000 ԱՄՆ դոլար




**Հուլիսի 19-ին Լոս Անջելեսում երեկոյան ժամը 6-12-ին տեղական երեք հայկական հեռուստաալիքներով՝ Հորիզոն, AABC եւ Հայվիժն, ուղիղ եթերով հեռարձակվեց ամերիկյան պետական դպրոցներում հայերենի դասընթացների որակի բարձրացման նպատակով կազմակերպված դրամահավաք-հեռուստամարաթոնը:**

**Այն Դավթյան եւ Մարիամյան կրթական հաստատության կազմակերպած արդեն երկրորդ մարաթոնն է, որի ընթացքում հավաքված ամբողջ գումարը կհատկացվի Գլենդեյլի ու մերձակա քաղաքների ամերիկյան պետական 29 դպրոցներում հայապահպանության խնդիրների լուծմանը եւ հատկապես դասագրքերի մշակմանն ու տպագրությանը, որոնցով իրենց մայրենի լեզուն ու մշակույթը կսովորեն ավելի քան 1000 հայ աշակերտներ:**

**Հեռուստամարաթոնի մասնակիցներին Երեւանից հեռուստակամուրջի միջոցով ուղիղ եթերում ողջունեց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, որը կարեւորեց Դավթյան եւ Մարիամյան կրթական հաստատության դերը երեխաներին հայեցի կրթության, հայապահպանության դժվարին խնդրում: «Հայ դպրոցն է, որ կապում է նախնիների լեզվին, պատմությանը, հայոց դարավոր մշակույթին, հայ դպրոցն է, ուր հայ երեխան սիրում եւ արժեւորում է դրանք եւ գիտակցում, որ ունի Մայր Հայրենիք, որն է Հայաստան երկիրը», ասաց նախարարը եւ պատասխանեց նաեւ իրեն ուղղված հարցերին, որոնք վերաբերում էին ՀՀ սփյուռքի նախարարության այս պահին գործող «Արի տուն» ծրագրին, որի շրջանակներում ներկայումս սփյուռքի տարբեր համայնքներից Հայաստան են այցելել հայ պատանիներ եւ աղջիկներ:**

**Մարաթոնի սրահը առանձնակի ջերմությամբ ընդունեց ՀՀ սփյուռքի նախարարության նվիրաբերած 5 հազար դոլարի լուրը: Թելեթոնին ակտիվ մասնակցեցին ոչ միայն Լոս Անջելեսի եւ Գլենդեյլի հայազգի բնակիչները, այլ նաեւ՝ ոչ շատ մեծ գումարներով անհատներ Երեւանից, որոնք հուլիսի 20-ին Երեւանի ժամանակով առավոտյան 6-12-ին Թելեթոնին էին հետեւում Horizon հեռուստակայանի www.horizonarmeniantv.com կայքից, ինչպես նաեւ ՀՀ սփյուռքի նախարարության mindiaspora.am եւ hayernaysor.am էլեկտրոնային թերթի կայքէջերից:**

**Ամերիկյան պետական դպրոցներում հայերենի դասընթացների որակի բարձրացման նպատակով Գլենդեյլում անցկացված հեռուստամարաթոնին հավաքվեց ավելի քան 100 հազար դոլար:**

Ս. Ս.

# Վերականգնվեց 20-րդ դարի իսպանական երաժշտության գլուխգործոցներից մեկը

**Ինչպես հայտնում է The Wall Street Journal պարբերականը, գտնվել է 20-րդ դարի իսպանացի աշխարհահռչակ կոմպոզիտոր Էնրիկե Գրանադոսի «Cant de les estrelles»՝ «Աստղերի երգը» ստեղծագործության նոտաների ձեռագիրը: Գրանադոսն այս ստեղծագործությունը գրել է 1910-ին: 1911-ին 17 րոպեանոց ստեղծագործությունը դաշնամուրի, օրգանի եւ երգչախմբի կատարմամբ առաջին անգամ հնչել է Բարսելոն քաղաքում եւ միանգամից համարվել է դարասկզբի երաժշտական գլուխգործոցներից: Կոմպոզիտորը մահացել է 1916-ին՝ Ամերիկայից Իսպանիա ճանապարհի վերադարձին: Իսպանական աղբյուրների վկայությամբ նավը, որով վերադառնում էր Գրանադոսը, այրել են գերմանացի զինվորները:**

**Մահվանից հետո կոմպոզիտորի ստեղծագործությունը՝ համաձայն կտակի, պատկանել է ընտանիքին: Սակայն կոմպոզիտորի որդին՝ Վիկտորը, առանց համաձայնության վաճառել է հռչակավոր հոր 4 ստեղծագործություն՝ ներառյալ «Աստղերի երգը», ամերիկացի պրոդյուսեր Նաթանիել Շիլկերտին:**

**40-ականներին նախատեսված էր ստեղծագործությունը ձայնագրել Colombia ձայնագրման ստուդիայում: Ստեղծագործության դիրիժոր պետք է դառնար Արթուր Տոսկանինին, սակայն տարբեր պատճառներով չէր ստացվում ստեղծագործությունը ձայնագրել: 1964-ին Շիլկերտի աշխատասենյակում տեղի ունեցած հրդեհի ժամանակ բազմաթիվ փաստաթղթերի հետ վառվեց նաեւ «Աստղերի երգի» միակ ձեռագիրը:**

**Սակայն 2000-ին Գրանադոսի կենսագիր Ուոլթեր Քլարկը համոզեց ամերիկացի պրոդյուսերի ընտանիքի անդամներին ցույց տալ իսպանացի կոմպոզիտորի՝ հրդեհից փրկված ձեռագրերը: Պարզվեց, որ նոտաներն ավելի շատ տուժել են ոչ թե կրակից, այլ ջրից, ինչի պատճառով դրանք համարյա հնարավոր չէր կարդալ: Համարյա 9-ամյա վերականգնողական աշխատանքներից հետո 2009-ի հուլիսին հնարավոր դարձավ ստեղծագործությունը ձայնագրել:**

Հ. Հ.

ԹԱՏՐՈՆ

# Թբիլիսիի հայկական դրամատիկականը հանդես կգա Հայաստանում

**Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնը հուլիսի 26-ից 31-ը հանդես կգա Հայաստանի հինգ քաղաքներում՝ Երեւանում, Էջմիածնում, Արտաշատում, Աշտարակում, Չարենցավանում, որտեղ հանդիսատեսը երեք ներկայացում դիտելու հնարավորություն կունենա: Ինչպես տեղեկացնում է Հայաստանի մշակույթի նախարարության մամուլի ծառայությունը, Թբիլիսիի հայկական դրամատիկականը կներկայացնի Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալան», Սայաթ-Նովայի ստեղծագործություններից կազմված «Աշխարհումս իմս դուն իս» եւ Յուջին Օ՛Նիլի «Սեր ծփիների տակ» ներկայացումները:**

# «Կնոջ աշխարհը»՝ երկօրյա ցուցահանդեսում

**Երկօրյա ցուցահանդեսում, որ տեղի կունենա հուլիսի 23-25-ը «Մոսկվա» կինոթատրոնում, ներկայացվելու են այնպիսի ապրանքներ, որոնց լինելիությունը հեշտացնում է կանանց հոգսերը, բարելավում առողջությունը, նպաստում գեղեցկության պահպանմանը: «Կնոջ աշխարհը» ցուցահանդեսը ութերորդն է այդ շարքից եւ կազմակերպել է «Էքսպոմեդիա» ցուցահանդեսների կազմակերպման կենտրոնը Հայաստանի Հանրապետական կուսակցության կանանց խորհրդի աջակցությամբ: Ցուցահանդեսը հնարավորություն է ստեղծում մասնակից կազմակերպություններին անմիջական շփման միջոցով սպառողին ներկայացնել նորամուծություններ, նոր առաջարկներ նորաձեւության ու կոսմետոլոգիայի, առողջապահության, մաշկի խնամքի, կենցաղային տեխնիկայի եւ այլ ոլորտներում:**

Ն. Պ.

# Կիլիկիո կաթողիկոսության նոր հրատարակությունը՝ «Երկնքի ճանապարհը»

2009 թվականը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի հռչակագրով հայտարարված էր Հայ երիտասարդության տարի: Խորապես համոզված լինելով հայ երիտասարդության դերակատարությանը հասարակության ներկայում եւ ապագայում՝ Կիլիկիո կաթողիկոսությունը փորձում է համախմբել երիտասարդությանը, որի շրջանում զգալի է կրոնական զարթոնքը՝ զուգորդված կրոնագիտական, աստվածաբանական ու եկեղեցաբանական գրականության պակասությամբ: Հենց վերջինն էլ նկատի առնելով Անթիլիասի տպարանը հրատարակել է մի հատորյակ, որը մեծապես կնպաստի երիտասարդության ճշմարիտ քրիստոնեական կյանք վարելուն: Հատորյակը, որ կոչվում է «Երկնքի ճամփան», վերահրատարակություն է՝ աշխարհաբարով, որի ամենանոր հրատարակությունը եղել է 4-րդը՝ 1907 թվականին:

# Արվեստի կուրատորության ամառային չորրորդ դասընթացը Երեւանում

Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը անցկացվելու է Արվեստի կուրատորության ամառային դասընթաց: Վերջին երեք տարիներին՝ 2006-ից ի վեր՝ արդեն չորրորդ անգամ Արվեստի քննադատների ազգային ասոցիացիան (ԱԻԿԱ Հայաստան) կազմակերպում է Արվեստի կուրատորների ամառային երեւանյան դասընթացները: Նախագիծը բազմաշերտ ձեռնարկ է, որը միավորում է արվեստի կուրատորներին, քննադատներին եւ մշակույթի բնագավառի գործիչներին, ովքեր քննադատական կուրատորության, ներկայացման եւ մեկնաբանության խնդիրների շուրջ կենտրոնացած բանավեճերի միջոցով իրենց նպաստն են բերում հաղորդակցական հարթակի ձեւավորմանը:

Հիմնադրման հենց սկզբից ամառային դպրոցը ներգրավել է համալսարանական հայտնի պրոֆեսորների, տեսաբանների, ովքեր ժամանել են աշխարհի տարբեր մասերից՝ Թուրքիայից ու Ռուսաստանից մինչեւ Կանադա եւ Նոր Զելանդիա:

Նախագիծն ընձեռում է արդյունավետ երկխոսության ձեւավորման եւ արտերկրի մասնակիցներին՝ Հայաստանի ժամանակակից արվեստի միջավայրի հետ ծանոթանալու հնարավորություն:

Ն. Պ.

# Հոկտեմբերին հայկական ֆիլմերի փառատոն Հաագայում

**Իր հիմնադրման 25-ամյակի առթիվ Հաագայում (Նիդեռլանդներ) գործող «Աբովյան հայկական մշակութային ասոցիացիան» ծրագրել է առաջիկա հոկտեմբերին կազմակերպել հայկական ֆիլմերի փառատոն՝ համագործակցությամբ Հաագայի «Ֆիլմուիս դեն Հաագ» եւ Երեւանի «Ոսկե ծիրան» փառատոնային կազմակերպությունների: Այս մասին է տեղեկացնում «Արմինյան միրոր սփեքթեյթըր» շաբաթաթերթի հունիսի 27-ի համարը:**

**Հաշվի առնելով, որ այս տարի լրանում է նաեւ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի 200-ամյակը, ասոցիացիան նախատեսում է նաեւ տարեվերջին պատշաճորեն նշել այդ տարեդարձը:**

**Այլ ծրագրերի թվում նշվում է հայկական ճաշատեսակների եւ պատրաստման ձեւերի վերաբերյալ մի յուրահատուկ եւ համապարփակ գիրք լույս ընծայել:**

**«Արմինյն միրոր սփեքթեյթըրի» հաղորդագրությունը նաեւ տեղեկացնում է, որ մայիսին ասոցիացիան մեծ շուքով նշել է Վիլյամ Սարոյանի 100-ամյակը «Ամերիկյան գրքի կենտրոնում», որտեղ դասախոսությունների եւ տեսաֆիլմերի օգնությամբ ներկաները ծանոթացել են գրողի կյանքին ու ստեղծագործություններին: Ներկայացվել են նրա գրքերից 7-ի գերմաներեն թարգմանությունները:**

Հ. Ծ.

AZG NEW 7.QXD 7/21/2009 10:54 PM Page 1



# Դավիթ Ֆահրադյանի ռեկորդային նվաճումը

*354 պտույտ պտտաձողի վրա*






Երեկ մարդաշատ էր Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի մարզադահլիճը: Հավաքված բազմությունը եկել էր ականատեսը դառնալու Երեւանի Վալերի Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի դասախոս, ՀՀ վաստակավոր մարզիչ Դավիթ Ֆահրադյանի կողմից Գինեսի ռեկորդների գրքում գրանցման ենթակա նոր ռեկորդի սահմանմանը: 28-ամյա Դավիթը պատրաստվում էր պտտաձողի վրա հետ պտույտներ կատարել:

Երբ ամեն ինչ պատրաստ էր վարժության կատարմանը, հանձնաժողովի անդամները դահլիճում հավաքվածներին խնդրեցին լռություն պահպանել, դադարեցնել անցուդարձը, որպեսզի ոչինչ չխանգարի Դավիթին ռեկորդային նվաճման հասնելու համար: Ի պատիվ Դավիթի, նա վստահ կատարեց վարժությունը՝ 354 անգամ պտույտ կատարելով պտտաձողի վրա: Եվ երբ նա ավարտեց վարժությունը, դահլիճը թնդաց ծափողջույններից ու բացականչություններից: Նախկին ռեկորդը պատկանում էր ռուսաստանցի մի մարզիկի, որը 250 անգամ էր պտտաձողի վրա պտույտներ կատարել:

Դավիթին առաջինը շնորհավորեցին հանձնաժողովի անդամները, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Խաչիկ Ասրյանը, Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի ռեկտոր Սուրեն Զոլյանը: Վերջինս խոստացավ Դավիթին պարգեւատրել երկու ամսվա աշխատավարձի չափով:

Դավիթ Ֆահրադյանը 7 տարեկանից զբաղվում է մարմնամարզությամբ, սպորտի վարպետ է, մարզչական գործունեություն է իրականացնում Հրանտ Շահինյանի անվան մարմնամարզության մարզադպրոցում, դասավանդում է ֆիզկուլտուրայի ինստիտուտում, եւ Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանում: Թեեւ Դավիթը բավական հոգնած էր, սակայն սիրով իր զգացումները կիսեց լրագրողների հետ. «Անչափ ուրախ եմ, որ հաջողվեց Գինեսի ռեկորդների գրքին արժանի նվաճման հասնել: 2005-ից եմ փորձել այս վարժությունը: Իմ անունը գրանցված է Հայաստանի «Դյուցազնագրքում»: Այն ժամանակ 307 պտույտ էի կատարել: Փետրվարից նախապատրաստվում էի ռեկորդի սահմանմանը: Օրական 2 պարապմունք եմ անցկացնում, բավական քրտնաջան մարզվում եմ, իսկ պտտաձողի վրա այս վարժությունը փորձում եմ շաբաթական մեկ անգամ, քանի որ վերականգնողական գործընթացը շատ դժվար է տեղի ունենում: Ընդհանուր առմամբ պետք է դիմացկուն լինես, ամուր ձեռքեր ու սիրտ-անոթային համակարգ ունենաս: Վստահ էի, որ այսօր կհաջողվի Գինեսի ռեկորդների գրքին արժանի նվաճման հասնել, քանի որ լավ էի նախապատրաստվել: Այդ գրքում գրանցվելը հնարավորություն կտա ինձ պայմանագիր կնքել Լոնդոնի կենտրոնական գրասենյակի հետ հետագայում շոու-մրցույթների հրավիրելու համար: Շնորհակալություն եմ հայտնում ինձ աջակցողներին, համալսարանի ռեկտոր պարոն Զոլյանին, որը մարզումների եւ աշխատանքի համար բոլոր պայմանները ստեղծել է»:

Այժմ հանձնաժողովը ռեկորդի սահմանման տեսանյութն ու բոլոր փաստաթղթերը պետք է ուղարկի Լոնդոն եւ սպասի դրական պատասխանի: Ինչպես նշեց «Արտասովոր շարժողական գործունեության գրանցման» հանձնաժողովի նախագահ Վարդան Թովմասյանը, Գինեսի ռեկորդների գրքում նվաճման գրանցումը տեւում է 2-4 ամիս: Դա բավական աշխատատար գործընթաց է, քանի որ նմանատիպ նվաճումներ աշխարհի բոլոր ծայրերից ստանում է հանձնաժողովը: Հարկավոր է դիտել եւ ուսումնասիրել ռեկորդի սահմանումը վկայող տեսանյութը, ստուգել եւ համոզվել, որ կադրերը մոնտաժված չեն: Ըստ Թովմասյանի, լինում են դեպքեր, որ հանձնաժողովը մերժում է ռեկորդի գրանցումն առանց որեւէ պատճառաբանություն ներկայացնելու: Այնպես որ, հարկավոր է համբերատար սպասել ու հուսալ, որ Լոնդոնից դրական պատասխան կստացվի:

Նշենք, որ Դավիթ Ֆահրադյանը կլինի Գինեսի ռեկորդների գրքում գրանցված 8-րդ հայը: Վերջինը Արտակ Գրիգորյանն է, որն օղակների վրա «խաչ» վարժություններ էր կատարում (**«Ազգը»** ժամանակին հանգամանորեն անդրադարձել է Արտակի նվաճումներին): Հայաստանում 1991-ին Գինեսի գրքի օրինակով հիմնվել է «Դյուցազնագիրքը»: Հանձնաժողովի առաջին նախագահը եղել է Միխայել Իսպիրյանը, հետո՝ Արթուր Գեւորգյանը, 1998-ից այն ղեկավարում է Վարդան Թովմասյանը:

# «Վերդերը» Գերմանիայի սուպերգավաթակիր

Բրեմենի «Վերդերը» ֆուտբոլային նոր մրցաշրջանը սկսեց Սուպերգավաթի նվաճումով: Պատվավոր մրցանակի համար պայքարում «Վերդերը» 2-1 հաշվով պարտության մատնեց երկրի չեմպիոն «Վոլֆսբուրգին»: Նախորդ մրցաշրջանում «Վերդերի» ելույթները երկակի տպավորություն թողեցին: Թիմը հաջող հանդես եկավ ՈւԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում՝ հասնելով մինչեւ եզրափակիչ, որտեղ զիջեց Դոնեցկի «Շախտյորին»: Բացի այդ բրեմենցիները նվաճեցին երկրի գավաթը: Իսկ ահա բունդեսլիգայի առաջնությունում թիմը գրավեց միայն 10-րդ տեղը:

Եզրափակիչ խաղում հաշիվը 20-րդ րոպեին բացեց «Վերդերի» խաղացող Մերտեզակերը: Ընդմիջումից հետո Գրաֆիտեն վերականգնեց հավասարակշռությունը, սակայն խաղավարտից 9 րոպե առաջ Ֆրիցը խփեց հաղթական գնդակը: Վերջին րոպեին «Վերդերը» կարող էր նաեւ 3-րդ գոլը խփել, սակայն Ֆրինգսը չիրացրեց 11 մ հարվածը:

Հետաքրքրական է, որ Գերմանիայում Սուպերգավաթը ոչ միշտ է խաղարկվում եւ պաշտոնական բնույթ չի կրում: Ուստի պատահական չէ, որ եզրափակիչ խաղում փոխադարձ համաձայնությամբ թիմերը 6-ական փոխարինում կատարեցին: Այսինքն, մարզիչներն այդ խաղը դիտարկում էին որպես ստուգողական հանդիպում: Բայց ամեն դեպքում «Վերդերի» համար հաճելի էր 4-րդ անգամ դառնալ սուպերգավաթակիր: Նախկինում թիմը նման նվաճման էր հասել 1988, 1993 եւ 1994-ին: Այս տարվանից սկսած Սուպերգավաթի մրցաշարի հովանավորը Volkswagen ընկերությունն է, ուստի խաղը կայացավ «Վոլֆսբուրգի» «Ֆոլկսվագեն Արենա» մարզադաշտում:

# 12-ամյա պատանին վարպետների թիմում

12-ամյա բոլիվիացի Մաուրիսյո Բալդիվյեսոն երկրի առաջին դիվիզիոնի «Ավրորա» թիմի կազմում մասնակցեց առաջնության հանդիպմանը: Թիմի մարզիչ Խուլիո Սեսար Բալդիվյեսոն, որ պատանու հայրն է, որդուն խաղադաշտ մտցրեց հանդիպման ավարտից 10 րոպե առաջ: Այդ խաղում «Ավրորան» հյուրընկալվելիս մրցակցին զիջեց 0-1 հաշվով: Մարզչի կարծիքով, որդին իր տարիքի համեմատ ցուցադրեց ֆուտբոլային հմտությունները եւ ընդհանուր պատկերը չփչացրեց: Խաղի ժամանակ մի դրվագում մրցակցի ֆուտբոլիստը նույնիսկ պատանուն գցեց, որի հետեւանքով քիչ էր մնացել խաղադաշտում ֆուտբոլիստներն ընդհարվեին:

Խաղից հետո Մաուրիսյոն լրագրողներին հայտնել է, որ խաղադաշտում իրեն զգում էր, ինչպես ձուկը ջրում: Նա երազում է հոր նման լավ ֆուտբոլիստ դառնալ: Վերջինս ժամանակին հանդես է եկել Արգենտինայի, Քաթարի, Էկվադորի եւ Ճապոնիայի ակումբներում:



# Սարգսյանը շարունակեց հաղթարշավը

Կոպենհագենի շախմատի մրցաշարում հաղթարշավն է շարունակում Գաբրիել Սարգսյանը: 4-րդ տուրում նա պարտության մատնեց հնդիկ շախմատիստ Սեթուրամանին: Գաբրիելը 4 միավորով Վլադիմիր Մալախովի, Պետեր Հայնե Նիլսենի, Բորիս Ավրուխի, Յուրի Կուզուբովի, Էմանուել Բերգի, Նեգի Պարմերիանի, Ջոնի Հեկտորի եւ Դանիել Լեալի հետ գլխավորում է աղյուսակը:

# Հաջող մեկնարկ

Անդորրայում մեկնարկած շախմատի միջազգային մրցաշարում հաջող է հանդես գալիս գրոսմայստեր Կարեն Մովսիսյանը: Նա շահել է անցկացված 3 պարտիաներն էլ: Կարենի մրցակիցներն են եղել իսպանացիներ Սերժիո Ալսինան, Խուան Տրեպասը եւ հնդիկ շախմատիստուհի Էսհա Կարավադեն: Կարենը 10 շախմատիստների հետ 3 միավորով գլխավորում է աղյուսակը: Մրցաշարին մասնակցում են 154 շախմատիստներ: Շվեյցարական մրցակարգով կանցկացվի 9 տուր:

# «Ռեալը» կրկին աստղային թիմի է վերածվում

Ժամանակին Մադրիդի «Ռեալին» աստղային թիմ էին անվանում, քանի որ այդ ակումբում էին հանդես գալիս համաշխարհային ֆուտբոլի ամենավառ «աստղերը»: Իսկ ահա վերջին տարիներին «Ռեալը» զգալիորեն զիջել էր դիրքերը միջազգային ասպարեզում եւ չեմպիոնների լիգայում հաղթելու մասին թիմի երկրպագուները նույնիսկ չէին երազում: Սակայն ակումբի նախագահի պաշտոնում Ֆլորենտինո Պերեսի վերադարձը կտրուկ փոխեց իրավիճակը: «Ռեալը» դարձավ ամռան տրանսֆերային շուկայի գլխավոր գործող անձը, որի իրականացրած գործարքները համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում պարզապես զարմանք առաջացրին:



Թերեւս քչերն էին հավատում, որ Պերեսը կիրականացնի իր նախընտրական ծրագիրը՝ թիմ հրավիրելով առաջին մեծության «աստղերին»: Պերեսի համար դա նորություն չէր: Դարասկզբին նա նման փորձ արդեն ուներ: Այն ժամանակ Պերեսը «Ռեալում» իր գործունեությունը սկսեց թիմի անհաշտ մրցակից «Բարսելոնից» ռեկորդային՝ 71 մլն եվրոյով Լուիշ Ֆիգուի գնումով: Մեկ տարի անց «Ռեալում» հայտնվեց Զինեդին Զիդանը, որի համար «Յուվենտուսին» 75 մլն եվրո վճարվեց: Եվս մեկ տարի անց «Ինտերից» «Ռեալ» տեղափոխվեց Ռոնալդոն, 2003-ի ամռանը՝ Բեքհեմը, 2004-ին՝ Օուենը: Այսպիսով, 2004/05-ի մրցաշրջանում «Ռեալում» հանդես էին գալիս «Ոսկե գնդակի» չորս դափնեկիրներ Ռոնալդոն (1997-ի եւ 2002-ի լավագույն ֆուտբոլիստ), Զիդանը (1998), Ֆիգուն (2000) եւ Օուենը (2001): Եվ դա այն դեպքում, երբ արքայական ակումբում հանդես էին գալիս սեփական «աստղերը»՝ Ռաուլն ու Իկեր Կասիլյասը, ինչպես նաեւ բրազիլացի Ռոբերտո Կառլոսը: Պերեսի պաշտոնավարության 5,5 տարիների ընթացքում «Ռեալը» նվաճեց չեմպիոնների գավաթը, երկու անգամ դարձավ Իսպանիայի չեմպիոն:

Եվ ահա 2-րդ անգամ ստանձնելով ակումբի նախագահի պաշտոնը, Պերեսը սկսեց իրագործել իր նախընտրական ծրագիրը: Նա նախ Մադրիդ վերադարձրեց Զինեդին Զիդանին՝ նշանակելով իր խորհրդական: Պաշտոնավարության 9-րդ օրը՝ հունիսի 9-ին «Ռեալը» պայմանագիր կնքեց «Միլանի» բրազիլացի կիսապաշտպան Կակայի հետ: Վերջինս 6 տարվա պայմանագիր կնքեց ակումբի հետ: Նրա տեղափոխման դիմաց ««Ռեալը» «Միլանին» 68 մլն եվրո վճարեց: Այնուհետեւ արքայական ակումբին անդամագրվեց Ռաուլ Ալբիոլը «Վալենսիայից» (15 մլն եվրոյի դիմաց), «Մանչեսթր Յունայթեդի» առաջատար Քրիստիանու Ռոնալդուն (ռեկորդային 93,4 մլն եվրոյի դիմաց) եւ «Լիոնի» հարձակվող Քարիմ Բենզեման (35 մլն եվրո): Այսպիսով, ընդամենը մեկ ամսում Պերեսը 211,4 մլն եվրո ծախսեց տրանսֆերային շուկայում:

Սակայն դեռ վերջը չէ: «Ռեալը» հետաքրքրվում է նաեւ Խաբի Ալոնսոյով, Մայկոնով, Զլատան Իբրահիմովիչով, Դավիթ Սիլվայով, Ֆրանկ Ռիբերիով, Քրիստիան Կիվուով: Հնարավոր է, որ այս ցանկում հայտնվեն նոր ազգանուններ: Բնականաբար, նոր ֆուտբոլիստներ հրավիրելով թիմ, ակումբի ղեկավարությունը պետք է որոշ խաղացողներից ազատվի: Արդեն համաձայնություն է ձեռք բերվել գերմանական «Շտուտգարտի» հետ «Այաքսի» նախկին ֆուտբոլիստ Կլաս Յան Հունտելարի տեղափոխման հարցում: Գերմանական ակումբը նրա համար «Ռեալին» կվճարի 20 մլն եվրո, որից 7 մլն-ը կստանա «Այաքսը»: Նման պայմանավորվածություն կար «Այաքսի» եւ «Ռեալի» միջեւ 2008-ին, երբ հոլանդացի ռմբարկուն տեղափոխվում էր արքայական ակումբ:

# Մրցանակային հիմնադրամն աճում է

Վերջին երեք տարիներին թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնության մրցանակային ընդհանուր հիմնադրամն աճում է մեկական մլն դոլարով: Այս տարվա մենախաղի հաղթողները կստանան 1,6 մլն դոլար: Դա 6 տոկոսով ավելի է, քան նախորդ տարի: Իսկ ընդհանուր մրցանակային հիմնադրամը կկազմի 21,6 մլն դոլար:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 7/21/2009 10:32 PM Page 1



# Անտրամաբանական մոտեցում հակակարկտային համակարգի ընտրության հարցում

1-ին էջից

Սակայն 1992-ից հակակարկտային աշխատանքները դադարեցվել են ֆինանսական հատկացումների բացակայության պատճառով: Հրթիռահրետանային տեխնիկայի, զինամթերքի, կապի ու տրանսպորտային միջոցների, ռադիոլոկացիոն համակարգերի մի մասը 1990-1993-ականներին ոչնչացել է սահմանամերձ գոտում մարտական գործողությունների ընթացքում, իսկ մնացած մասը՝ հանձնվել պաշտպանության նախարարությանը:

Հակակարկտային ծառայության չգործելու հետեւանքով միայն բուսաբուծության ճյուղում կորուստները հասնում են 15-20 մլրդ դրամի: Միաժամանակ, հողերը ենթարկվում են էրոզիայի, առաջանում են սողանքներ, մեծապես տուժում են անտառները, արոտավայրերը, բույսերը, կենդանիները, թռչունները, ինչպես նաեւ շենքերը, շինությունները, կոմունիկացիաները, սոցիալ-հոգեբանական ծանր վիճակում են հայտնվում աղետից տուժած գյուղացիները: Ուստի, կառավարությունը անհրաժեշտ է համարել վերագործարկել այս ծառայությունը: Որոշման մեջ թվարկվում են այն մեթոդները, որոնցով պայքար է տարվում կարկուտի դեմ:

Հրթիռային մեթոդը նշվում է որպես կիրառվող մեթոդներից ամենաարդյունավետը՝ մինչեւ 70 տոկոս արդյունավետություն, բայց եւ ամենաթանկը: Թվարկվում են այս մեթոդը Հայաստանում կիրառելու դժվարությունները՝ հրթիռները ոչ կառավարվող են եւ չի բացառվում, որ դրանք պայթեն հարեւան երկրների տարածքում կամ, գործարանային խոտանի պատճառով, հենց գետնի վրա՝ պատճառելով ավերածություններ եւ զոհեր: Ավիացիայի պատճառով կարող են տեղի ունենալ պարտադրված արգելքներ: Մեկ ներմուծվող հրթիռի արժեքն է 100 հզ. դրամ, իսկ տարեկան անհրաժեշտ կլինի շուրջ 30 հազար հրթիռ:

Ավիացիոն մեթոդը հրթիռայինի համեմատ էժան է, բայց արդյունավետությունը կազմում է 50 տոկոս: Այս մեթոդի կիրառումն այժմ անհնար է: Բանն այն է, որ կարկտաբեր ամպերը հիմնականում առաջանում են Հայաստանի արեւմտյան սահմանների մոտ ու շարժվում դեպի մեր տարածք: Այս դեպքում կարկտաբեր ամպերի վրա ներգործելու աշխատանքները պետք է կատարվեն հարեւան երկրի տարածքում, որը ներկայումս անհնար է: Մեր տարածքում կիրառելն էլ կապված է բարդ լեռնային ռելիեֆի հետ՝ կարկուտից պաշտպանվող տարածքները մասնատված են: Այս մեթոդը կիրառելու համար անհրաժեշտ են նաեւ 4-5 հատուկ սարքավորումներով հագեցված ինքնաթիռներ:

Ացետիլենով գործող գազագեներատորային մեթոդի արդյունավետությունը նույնպես կազմում է մինչեւ 50 տոկոս: Չնայած դրան, այս մեթոդի կիրառումը մեր երկրում կառավարությունը նպատակահարմար է համարել: Ընդունելի է համարվել նաեւ քիմիական ռեագենտով գործող գեներատորային մեթոդը, որի արդյունավետությունը կազմում է արդեն մինչեւ 45 տոկոս, որն ամենաէժան տարբերակն է:

Հայաստանում գազագեներատորային հակակարկտային համակարգերի ներդրումը սկսվել է 2004-ից: Արգենտինյան SAPOI. SA ընկերության հետ կնքված պայմանագրով, Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում կառուցվել են շինություններ եւ տեղադրվել 15 ացետիլենային գեներատորներ, որոնք կարկտահարությունից պաշտպանում են 1200 հա տարածք: 2007-ից այդ համակարգերը շահագործող «ՄԵՎԱՆԾ» ՊՈԱԿ-ը կառուցել ու գործարկել է նոր 15 հակակարկտային համակարգեր, որոնցով պաշտպանության տակ է վերցվել եւս 1200 հեկտար գյուղատնտեսական տարածք: Այս ընթացքում հրդեհապայթյունավտանգ եւ շահագործման մեծ ծախսեր ունեցող ացետիլենի փոխարեն սկսվել է կիրառվել հեղուկացված պրոպան-բութան գազախառնուրդը: Իսկ ինչպիսի՞ն են այս համակարգի կիրառման արդյունքները:

Համենայն դեպս, կառավարության որոշման մեջ նշվում է, որ այս մեթոդը «բավականին արդյունավետ» է եղել թույլ, միջին եւ անգամ ուժեղ կարկուտների կանխման համար: Սակայն ընդգծվում է նաեւ, որ շատ ուժեղ եւ աղետալի կարկուտների դեպքում պայքարի արդյունավետության աստիճանը որոշելու համար անհրաժեշտ են եւս 2-3 տարվա գիտափորձարարական աշխատանքներ, ինչպես նաեւ Արմավիրի եւ Արագածոտնի մարզերից յուրաքանչյուրում 20-ական նոր հակակարկտային համակարգերի տեղադրում:

Առնվազն զարմանք է հարուցում արդյունավետության աստիճանը որոշելու վերոնշյալ տրամաբանությունը: Փաստորեն, նախ հարկ է ծախսեր կատարել, բերել նոր գազագեներատորային համակարգեր, ապա տեսնել, դրանք արդյունավե՞տ են ուժեղ կարկուտների դեպքում, թե՞ ոչ: Իսկ եթե արդյունավետ չլինե՞ն: Ի՞նչ պետք է անենք: Հե՞տ ուղարկենք հակակարկտային համակարգերը, թե՞ ճարահատյալ եւ անարդյունավետ շահագործել ենք, քանի որ արդեն վճարել ենք դրանց համար: Չէ՞ որ հենց կառավարության որոշման մեջ է նշված, որ այս համակարգերն ունեն մինչեւ 50 տոկոս արդյունավետություն: Ուստի շատ հավանական է ու տրամաբանական, որ դրանք անարդյունավետ լինեն ուժեղ կարկուտների կանխման դեպքում: Եվ ընդհանրապես, որտե՞ղ է նման ցածր արդյունավետություն ունեցող համակարգերով հակակարկտային ծառայություն ստեղծելու կառավարության մոտեցման տրամաբանությունը: Ի՞նչ է, կրա՞կն ենք ընկել նախկին գյուղնախարար Դավիթ Լոքյանի՝ արգենտինացիներից այս համակարգերի գնման պայմանավորվածության պատճառով:

Ինչպե՞ս կարելի է փոխարինել նախկինում գործող եւ մինչեւ 94 տոկոս արդյունավետություն ունեցող հրթիռահրետանային հակակարկտային համակարգը մինչեւ 50 տոկոս արդյունավետության համակարգերով: Արդյունավետության եւ շահավետության ցուցանիշների սոսկ համադրումը բավարար է ճիշտ կողմնորոշվելու եւ եզրակացության հանգելու համար: Եթե այդ հրանոթների պահպանված մասը գտնվում է պաշտպանության նախարարության ենթակայության ներքո, ապա հնարավոր է այն վերականգնել եւ ավելի քիչ ծախսերով: Հաստատ այդ հրանոթները որեւէ կարեւոր նշանակություն չունեն մեր բանակի ունեցած ռազմական տեխնիկայի շարքում եւ դրանց ավելի արդյունավետ կիրառման դաշտը հենց հակակարկտային ծառայությունն է: Հուսով ենք, որ կառավարությունը կհրաժարվի անտրամաբանական եւ անիմաստ ծախսեր կատարելուց ու հակակարկտային նոր համակարգ ստեղծելիս հիմք կընդունի տասնամյակներ շարունակ բարձր արդյունավետություն ցույց տված մեթոդը:

# Արձանագրություն վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 2009 թ. հուլիսի 7-ի խորհրդի նիստի

2009 թ. հուլիսի 7-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին ՀՀ ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը, նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Գրիգոր Ղոնջեյանը, Կարինե Մինասյանը եւ Վախթանգ Աբրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացումով, որտեղ առկա նոր տեղեկատվության հիման վրա ներկայացվել էին գնաճի, արտաքին միջավայրի, իրական եւ դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները, որոնք որոշակիորեն շեղվել էին ԿԲ-ի նախորդ կանխատեսումներից: Սպասվածից ավելի բարձր տեմպերով ՀՆԱ անկման պայմաններում՝ չնայած արտաքին հատվածից փոխանցված որոշակի գնաճային ճնշումներին, գնաճը գտնվել է նպատակային միջակայքի ստորին հատվածում՝ շուրջ 1 տոկոսային կետով ցածր լինելով ԿԲ-ի կանխատեսումներից:

Ըստ պաշտոնական վիճակագրության, 2009 թ. հունիսին նախորդ ամսվա նկատմամբ արձանագրվել է 0.3% գնանկում, որի պարագայում 12-ամսյա գնաճի ցուցանիշը աճել է նախորդ ամսվա 3.4%-ի համեմատ՝ կազմելով 3.6%: Ընդ որում՝ պարենային ապրանքների գները նվազել են 1.4%-ով (նպաստումը գնաճին -0.8 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գներն աճել են 2.0%-ով (նպաստումը գնաճին 0.3 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.4%-ով (նպաստումը գնաճին 0.1 տոկոսային կետ): Հունիսին արձանագրված գնանկումը հիմնականում պայմանավորված է եղել «բանջարեղեն եւ կարտոֆիլ» ապրանքախմբի գների 10.5% սեզոնային նվազմամբ (նպաստումը գնանկմանը 0.5 տոկոսային կետ), որը որոշակիորեն մեղմվել է բենզինի եւ դիզելային վառելիքի գների 8.7% աճով (նպաստումը գնաճին 0.2 տոկոսային կետ): Որոշակի գնանկում է արձանագրվել նաեւ «կենդանական եւ բուսական յուղ», «հացամթերք» եւ «ձու» ապրանքախմբերի գներում:

Իրավիճակային հաշվետվության ներկայացումից հետո խորհուրդը սկսեց իր քննարկումները արտաքին եւ ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ: Հաշվի առնելով ստացված նոր տեղեկատվությունը՝ Խորհրդի անդամները համաձայնեցին, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման պայմաններում ներքին տնտեսական իրավիճակը շարունակել է վատթարանալ, որի արդյունքում մայիսին 12-ամսյա կտրվածքով արձանագրվել է 15.7% տնտեսական անկում՝ գերազանցելով սպասվող ցուցանիշը: Վերջինս պայմանավորվել է կապիտալ ներհոսքի կրճատման եւ բնակչության եկամուտների շարունակական նվազման պարագայում հիմնականում շինարարության ծավալների էական կրճատմամբ: Նշված միտումներն արտացոլվել են նաեւ համախառն պահանջարկի զարգացումներում. մասնավոր իրական ծախսումների մակարդակը զգալիորեն ցածր է եղել իր հավասարակշիռ մակարդակից՝ գնանկումային ճնշումներ առաջացնելով սպառողական շուկայում: Վերոնշյալ պայմաններում, ընդհանուր առմամբ, ձեւավորվել է ներքին ցածր գնաճային միջավայր:

Խորհուրդը քննարկեց նաեւ միջազգային ապրանքային շուկաներում գնային զարգացումները: Նշվեց, որ հումքային եւ պարենային մի շարք ապրանքների գների աճը հունիսին շարունակվել է, ինչը ազգային արժույթի փոխարժեքի կայունության պայմաններում որոշակիորեն անդրադարձել է նաեւ ներմուծվող որոշ ապրանքների դրամային գների վրա: Խորհուրդը համաձայնեց, որ այս միտումները վկայում են համաշխարհային տնտեսության վերականգնման առումով շուկայի մասնակիցների ակնկալիքների բարելավման մասին: Այդուհանդերձ, հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածում համաշխարհային տնտեսական զարգացումների հեռանկարները մնում են խիստ անորոշ՝ պահպանելով նաեւ արտաքին գնաճային միջավայրի հետագա փոփոխությունների անորոշությունները:

Առանձին քննարկումների առարկա դարձան նաեւ ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները, այդ թվում տնտեսության վարկավորման եւ տոկոսադրույքների միտումները: Խորհուրդն արձանագրեց, որ տարեսկզբից ԿԲ-ի կողմից հետեւողականորեն իրականացվող ծավալային ընդլայնման քաղաքականությունը որոշակիորեն անդրադարձել է վարկային շուկայի աշխուժացման վրա, ուստի այս միտումները խորացնելու եւ ամրապնդելու նպատակով ԿԲ-ը պետք է շարունակի ակտիվացնել ծավալային ընդլայնման շրջանակներում միջոցառումների իրականացումը: Խորհուրդը միակարծիք էր, որ վերջինիս հետեւողական իրականացումը ցանկալի արդյունքներ կունենա առավել երկարաժամկետ տոկոսադրույքների առումով՝ չնայած շուկայի մասնակիցների կողմից դրսեւորվող ռիսկերից խուսափելու վարքագծին:

Մակրոտնտեսական ներքին եւ արտաքին միջավայրի, ֆինանսական շուկայի զարգացումների քննարկումից հետո Խորհրդի քննարկումները կենտրոնացան դրամավարկային քաղաքականության հետագա ուղղությունների շուրջ: Բազմիցս նշվեց, որ գնահատվածից զգալիորեն ավելի բարձր տեմպերով ՀՆԱ կրճատումը՝ չնայած արտաքին հատվածից փոխանցված որոշակի գնաճային ճնշումներին, ստեղծել է ներքին ցածր գնաճային միջավայր: Ընդ որում, առկա նոր գնահատականները վկայում են մինչեւ տարեվերջ այս միտումների պահպանման հեռանկարների իրատեսականության մասին: Այս պայմաններում, չնայած տնտեսության վերականգնման հնարավոր ժամկետներից ու տեմպերից կախված էական անորոշությունների պահպանմանը, խորհուրդը առավել հիմնավորված համարեց շարունակել տոկոսադրույքների նվազեցումը՝ զուգակցելով այն ծավալային ընդլայնման ակտիվ իրականացմամբ:

Նիստի ավարտին Խորհուրդը որոշեց իջեցնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.50 տոկոսային կետով՝ սահմանելով այն 5.50%: Ներգրավված ավանդների եւ լոմբարդային վարկերի տոկոսադրույքները սահմանվեցին համապատասխանաբար՝ 2.50% եւ 8.50%:

ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն

ՕԳՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

5 տարեկան Հովհաննես Թովմասյանն ունի քաղցկեղ: Նրան արտասահմանում բուժելու նպատակով խնդրում ենք դրամական օգնություն փոխանցել

«Ակբա Կրեդիտ Ագրիկոլ» բանկ հ/հ
220001769334000

Հեռ. (093) 79-13-12, (077) 39-0842:






**Վաճառվում է**

ավտոլվացման բիզնես 60 քմ եւ նկուղային՝ 50 քմ տարածքով, ընդհանուրը՝ 110 քմ: Տարածքը կարելի է օգտագործել տարբեր բիզնեսի համար: Հասցեն՝ Ավետիսյան 67/6 (Ավետիսյան-Փափազյան խաչմերուկի հարեւանությամբ): ***Հեռ.՝ (091) 21 88 72:***

**ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքները. 21.07.2009 թ.**

| ISO-ի կոդը | Միավոր | Արտարժույթ | Միջին փոխարժեք |
|---|---|---|---|
| USD | 1 | ԱՄՆ դոլար | 365.19 |
| EUR | 1 | ԵՎՐՈ | 519.17 |
| RUR | 1 | Ռուս. ռուբլի | 11.76 |
| GEL | 1 | Վրաց. լարի | 219.04 |

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 21.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28:

ԱԶԳ
ԿԻՆՈ
ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՐԵՎԱՆՅԱՆ «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» 6-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ 12-19 ՀՈՒԼԻՍ

ՈՍԿԵ ԾԻՐԱՆ GOLDEN APRICOT

VIVAcell MTS



Դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը եւ Հարություն Խաչատրյանը փառատոնի փակման արարողության ժամանակ





Ֆրանսահայ հայտնի պրոդյուսեր Ալեն Թերզյան. «Հսկա փառատոն է, հսկա: Փառատոնին տնօրենը հսկա մարդ մըն է եւ շատ աղվոր գործ կընէ: Ամենն ալ գիտեն, երբ Վենիս երթամ, երբ Կանն երթամ, Բեռլին երթամ, գիտեն եւ կըսեն, որ «Ոսկե ծիրանը» շատ մեծ փառատոն մըն է»:

# ՓՈՔՐ ԵՐԿՐԻ ՀԱՍՈՒՆ ՊՏՈՒՂԸ

***Այսպիսի անվանում ստացավ 6-ամյա «Ոսկե ծիրանը», որը բացվեց հուլիսի 12-ին «Մոսկվա» կինոթատրոնում՝ ֆրանսիացի ռեժիսոր Լոռան Տյուելի «Մերձավոր շրջապատ» ֆիլմով եւ փակվեց հուլիսի 18-ին՝ Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» ֆիլմի ցուցադրությամբ, որից հետո «Լաքար» համալիրում հայտարարվեցին այս տարվա մրցանակակիրների անունները:***

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Փառատոնի պատվավոր հյուր, միջազգային խաղարկային ֆիլմերի ժյուրիի նախագահ, ճապոնացի ճանաչված կինոբեմադրիչ Կոհեյ Օգուրին Հայաստանում իրեն զարմացնող շատ բան է տեսել ու լսել. նրան առաջին հերթին անհավանական է թվացել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո աղքատ երկրների շարքը դասվող Հայաստանը կարող է կինոփառատոն կազմակերպել բավականին պատշաճ մակարդակով՝ ձեռք բերված ընդամենը վեց տարվա ընթացքում: «Իհարկե, պետք չէ համեմատել Կաննի կամ Բեռլինի կինոփառատոների հետ, բայց որպես փոքր երկրի կինոփառատոն, իսկապես հաջողված է: Կասկած չունեմ, որ տարեցտարի էլ ավելի առաջ կգնա, իսկ ուրույն դիմագիծ ունենալու համար «Ոսկե ծիրանը» կարող է ընտրել հիմնականում փոքր երկրների ֆիլմերը, այդպես փառատոնն ավելի ինքնատիպ կդառնա»:

Հասկանալի է, որ Հայաստանի պես փոքր երկիրը չի կարող խոշոր կինոարտադրություն ունենալ, հենց դրա համար էլ ստեղծվում են կինոփառատոները: Խելամիտ չեն նրանք, ովքեր կարծում են, թե կարելի է ապրել առանց կինոփառատոնի՝ բավարարվելով միայն հեռուստատեսությամբ եւ ինտերնետով, քանի որ դրանք միայն տեղեկատվություն են տալիս հասարակությանը, իսկ կինոարվեստը նրա առջեւ բացում է մարդու ներաշխարհը, օգնում է հասնելու ինքնաճանաչման: Ամենագնահատելին դա է: Իհարկե, ե՛ւ ինտերնետը, ե՛ւ հեռուստատեսությունը կինոյից են ծնվել, բայց այնտեղ մնացել է միայն արտաքին կողմը, իսկ կինոարվեստը ավելի խորքային է փիլիսոփայական, գեղարվեստական եւ տեխնիկական արժանիքներով: Եթե Հայաստանում տարեկան 3-5 ֆիլմ նկարահանվի, դարձյալ կարելի է ասել, որ այդպիսի կինոփառատոն ունենալն անհրաժեշտ է»:

Օգուրին ուրախալի է համարում, որ փառատոնի մրցութային ֆիլմերի ծրագրում ընդգրկված էին նաեւ հարեւան Վրաստանից եւ Թուրքիայից բերված ֆիլմեր, որոնք էլ դարձան մրցանակակիրները: «Վրացական ֆիլմը ստացավ ոսկե մրցանակ, իսկ ես որպես ժյուրիի նախագահ հատուկ մրցանակը հանձնեցի թուրքական ֆիլմին: Մասնակցել եմ բազմաթիվ կինոփառատոների եւ կարող եմ ասել, որ մրցութային ծրագրերում ընդգրկված ոչ բոլոր ֆիլմերն են աչքի ընկնում գեղարվեստական բարձր արժանիքներով: Վրացական ֆիլմի մասին կարելի է ասել, որ դա այն ֆիլմերից է, որոնք ստեղծվում են մի քանի տարին մեկ անգամ: Ժյուրիի բոլոր անդամները միաձայն հաստատեցին, որ հոյակապ աշխատանք է: Եթե ամեն մի փառատոնում այդպիսի 1-2 ֆիլմ լինի, դարձյալ բավական է»:

Հայաստանը ճապոնացի կինոբեմադրիչի վրա թողել է երկակի տպավորություն. տեղ-տեղ գյուղի է նման, տեղ-տեղ՝ քաղաքի: Հատկապես տպավորիչ է օրվա տարբեր ժամերին գույնը փոխող վարդագույն տուֆը, որի գունախաղին հետեւելիս իրեն իսկապես քաղաքում է զգացել, իսկ Երեւանից դուրս հասկացել է, որ Հայաստանը գյուղական երկիր է, որտեղ ցայտուն տարանջատված են հինն ու նորը: «Չի կարելի հինն ու նորն այդպես հեռացնել իրարից, դրանք պետք է միահյուսված լինեն: Պետք չէ գնալ առաջ՝ անտեսելով հինը», ասաց Օգուրին:

Ամերիկահայ կինոբեմադրիչ Էրիկ Նազարյանը, որի «Կապույտ ժամ» ֆիլմն անցած տարի «Ոսկե ծիրան» կինոփառատոնում արժանացավ մի քանի մրցանակների, այս տարի ընդգրկված էր «Հայկական համայնապատկեր» մրցույթի ժյուրիի կազմում: Մրցութային ծրագրում ընդգրկված բոլոր ֆիլմերը դիտելուց հետո համոզվել է, որ հայկական կինոյում բավականին կարող ուժեր կան, պարզապես ժամանակ է պետք նոր տեխնոլոգիաներին տիրապետելու եւ կինոյի լեզվով մեր երկրի ու ժողովրդի մասին պատմություններ պատմելու համար: «Տարբեր երկրներում ստեղծագործող հայ կինոբեմադրիչները զանազան թեմաներով ֆիլմեր էին ներկայացրել, որոնց մեջ, իհարկե, կային հետաքրքրական սյուժեով, բայց վարպետության պակասով նկարված ֆիլմեր, կար նաեւ հակառակ երեւույթը: Բայց մրցանակակիր ֆիլմերն իսկապես բովանդակալից էին, հուզիչ, գնահատելի էր, որ կինոբեմադրիչները կարողացել էին զուսպ միջոցներով օտար կինոհանդիսատեսին շատ բան ասել Հայաստանի եւ հայերի մասին:

«Հայկական համայնապատկեր» մրցույթում հաղթած ֆիլմերը ինձ համար շատ թանկ են, որովհետեւ սիրով են նկարահանված առօրյա կյանքի մասին: Իհարկե, լիամետրաժ ֆիլմ նկարահանելը դժվար է, բայց կարճամետրաժը նույնպես իր դժվարություններն ունի՝ կարճառոտ բանաստեղծություն գրելու պես:

→Բ





Ճապոնացի կինոբեմադրիչ Կոհեյ Օգուրի. «Մահվան խայթը» ֆիլմս ամուսինների միջեւ ծագած անախորժության մասին է: Ինչպես ասում է ճապոնական ասացվածքը, տղամարդու ու կնոջ միջեւ եղածը շունն էլ չի ուտի»:




Գեորգի Օվաշվիլիի որդին Հայաստանի վարչապետի դրամական պարգեւով:



AZG NEW CIRAN.QXD 7/21/2009 10:29 PM Page 2







*Ռուս կինոբեմադրիչ Սերգեյ Սոլովյով*



*Հայկ Բալյանը Երեւանի կենդանաբանական այգում*



*Ամերիկահայ դերասան Էրիկ Պողոսյան*



*Ֆրենսիս Ֆորդ Կոպոլլայի ֆիլմերի պրոդյուսեր Անահիտ Նազարյան*



*Ամերիկացի հայտնի կինոբեմադրիչ Ռոբ Նիլսոն. «Երբ առաջին անգամ հանդիպեցի Փարաջանովին, շատ երիտասարդ էի: Մեր հանդիպման ժամանակ նա նայեց ինձ եւ ասաց.«Այս ամերիկացի կովբոյն ո՞վ է»:*



*Արսինե Խանջյան. «Փառատոնն իր ճանապարհն այնքան հաջող կկտրէ, որ ոչ թե ես միայն, այլ բոլոր մեր հյուրերը աշխարհի չորս ծագերէն ամեն տարի ներկա կգտնվին»:*

# 6-րդ կինոփառատոնը փակվեց, կբացվի կինոդպրոցը

Փառատոնի փակումից հետո Հարություն Խաչատրյանի մտքերը պտտվում են ոչ թե հանգիստ վայելելու, այլ սեպտեմբերից դարձյալ դռները բացող կինոդպրոցի նոր ծրագրերի շուրջը: «Ինձ համար չափազանց ոգեւորիչ է, որ այս տարվա փառատոնի սահուն շարունակությունը դառնում է կինոդպրոցը: Հայկական կինոյի արմատները վերագտնելու եւ ամրացնելու գաղափարը իրականություն պիտի դառնա, մյուս տարի պիտի ունենանք 30-40 ֆիլմ՝ դա է իմ երազանքը: Կինոփառատոն անցկացնելու հիմնական նպատակը երիտասարդների մեջ ֆիլմ նկարահանելու ցանկություն առաջացնելն է: Կինոն մեծ երջանկություն է բոլոր այն ազգերի համար, ովքեր հասկանում են դրա արժեքն ու նշանակությունը: Փառատոնն ավարտվեց, իսկ կինոդպրոցը շարունակվում է՝ հայկական կինոն լայն արահետներով տանելու համար: Ոչ մի փառատոն ինքնանպատակ չէ, ամեն մեկն ունի իր շարունակականությունն ու գերնպատակը: Ցավոք, մեզանում դեռեւ լիովին չի գիտակցվում կինոքաղաքականության նշանակությունը, լրջմիտ մոտեցում չի դրսեւորվում այդ հարցի հանդեպ: Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր հասկանում են դրա կարեւորությունը եւ իրենց աշխատանքով այն փոխանցում են հասարակությանը», ասաց Հարություն Խաչատրյանը:

Փառատոնի բացման ֆիլմի՝ «Մերձավոր շրջապատի» ցուցադրությունից հետո հնչած դժգոհությունները չէին ծագի, եթե մարդիկ տեղեկացված լինեին, որ ֆրանսիացի հանրաճանաչ կինոպրոդյուսեր Ալեն Թերզյանին Հայաստան բերելը շատերի երազանքն էր եղել: «Սփյուռքի մեծանուն հայերից է, որը մեծ վաստակ ունի ֆրանսիական եւ համաշխարհային կինոյում, հետեւաբար նրան այստեղ բերելու համար կարելի էր նաեւ թույլ ֆիլմ ցուցադրել: Դրա մեջ որեւէ խնդիր չեմ տեսնում, այդ նեղմտությունն ինձ ուղղակի անհասկանալի է: Այլ հարց է, եթե այդ ֆիլմը ընդգրկված լիներ փառատոնի մրցութային ծրագրում, այդ դեպքում իրավացի կլիներ պնդելը, որ այն մեր կինոճաշակն է ցուցադրում, խրախուսվում է մեր կողմից: Բայց Ալեն Թերզյանի պատվին բացման ֆիլմ ընտրելուց առաջացած դժգոհությունը, ուղղակի անիմաստ եմ համարում»:

Փառատոնի գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանը եւս պնդեց, որ փառատոնի բացման եւ փակման ֆիլմերը սովորաբար մրցութային չեն լինում, դրանց ընտրությունը հետապնդում է բոլորովին այլ նպատակ՝ կապված խոշոր իրադարձության, անձի ու երեւույթի հետ: «Հասկանում եմ բոլոր այն դժգոհությունները, որ եղան բացման ֆիլմից հետո, բայց այդ ամենը ընդունելով, պետք է մեր աչքի առջեւ ունենայինք գերխնդիրը՝ Թերզյանին Հայաստան բերելը: Արդեն երեք տարի փորձում էինք նրան բերել, լավ իմանալով, թե նրա ներկայությունը ինչ շուք կհաղորդի փառատոնին: «Մերձավոր շրջապատը» ոչ թե մեր, այլ Թերզյանի ընտրությունն էր պայմանավորված էր հանգամանքով, որ նա իր հետ բերելու էր նաեւ Ժան Ռենոյին: Համոզված եմ, որ եթե Ռենոն Հայաստան գար, հազիվ թե դժգոհ դեմքեր լինեին ֆիլմից, որովհետեւ մեր կինոհանդիսատեսը նրան ճանաչում եւ սիրում է: Ալեն Թերզյանի այցն, իրոք, չափազանց կարեւոր էր հայկական կինոարտադրությունը զարգացնելու առումով: Իսկ ֆիլմի մասին կցանկանայի ասել, որ թեպետ աչքի չի ընկնում գեղարվեստական բարձր արժանիքներով, բայց ներքին բախումներով հետաքրքրական է, մանավանդ որ գլխավոր հերոսը պատժվում է չարագործությունների համար: Եթե նույն թեմայով ֆիլմը նկարահանած լիներ Ֆորդ Կոպոլան, դժվար թե որեւէ մեկը բողոքեր, որ օտար ֆիլմում հայը ներկայացված է այդպիսի որակներով: Եթե հարցնեք Ալեն Թերզյանին, նա որպես պրոդյուսեր կխոսի թվերի լեզվով եւ ֆիլմի հաջողությունը կբացատրի բերած շահույթով: Չնայած դրան, ես բնավ այդ ֆիլմի երկրպագուն չեմ եւ այդպիսի ֆիլմը երբեւէ չի ընդգրկվի մեր փառատոնի մրցութային ծրագրում: Ինձ զարմացնում է այն իրողությունը, որ հայկական հեռուստատեսությամբ ամեն օր հանցախմբերի մասին սերիալներ են ցուցադրվում եւ հասարակության լայն շերտերն ամեն օր դիտում են առանց բողոքելու: Բայց չգիտես ինչու, երբ օտար ռեժիսորն է նկարահանում այդպիսի ֆիլմ, մեր ազգային արժանապատվությունն իսկույն վիրավորվում է», ասաց գեղարվեստական տնօրենը:



Փառատոնի մրցութային ծրագրերում ընդգրկված ֆիլմերի մակարդակը, դատելով ժյուրիների նախագահների եւ անդամների կարծիքներից, գոհացուցիչ է եղել, իսկ դա որոշիչ նշանակություն ունի փառատոնի հեղինակության համար, քանի որ ֆիլմերն ընտրելիս կազմակերպիչները առաջին հերթին հաշվի են առել կինոլեզվի առանձնահատկությունները, ասելիքի խորությունն ու համամարդկային նշանակությունը: Այդպիսի ֆիլմեր ներկայացնող փառատոնին մասնակցելը հյուրերը մեծ պատիվ են համարում, հենց դրանով է բացատրվում Ֆրանսիայում «Ոսկե ծիրանի» ձեռք բերած ճանաչումը:

## «Ռեժիսորներ առանց սահմանի»

Ծրագիրն այս տարի հարստացավ հայ-թուրքական պլատֆորմով եւ նախագծով, հաստատված 16 նախագծերը մասնագետները 3 օր շարունակ քննարկեցին հեղինակների, պրոդյուսերների եւ ռեժիսորների մասնակցությամբ: «Ի դեպ, այս տարվա մրցութային ծրագրում ընդգրկված եւ մրցանակի արժանացած «Աշուն» ֆիլմը երկու տարի առաջ ներկայացվել էր որպես կինոնախագիծ, գտել էր վրացի գործընկերներին եւ արագորեն ավարտին հասել: Սեդա Մուրադյանի վավերագրական ֆիլմը՝ «Տնից տուն», ֆինանսավորվել է պետության կողմից, հիմա ընթացքի մեջ են մի քանի այլ կինոնախագծեր, որոնց կյանքի է կոչել «Ռեժիսորներ առանց սահմանի» ծրագիրը:

## Փակման ֆիլմը՝ «Նռան գույնը»

Ցուցադրելու առիթը հայ կինոյի աննման վարպետ Սերգեյ Փարաջանովի ծննդյան 85-ամյակն էր եւ նրա ստեղծած անմեռ ֆիլմի 40-ամյակը: Ամբողջ աշխարհում երկար տարիներ ցուցադրվել է ֆիլմի «Յուտկեւիչի տարբերակը». «Ժամանակին ֆիլմը չի ընդունվել, եւ Յուտկեվիչը նեգատիվը վերամոնտաժել է եւ ֆիլմ ստացել, այդպես գոհացնելով չինովնիկներին: «Հայաստանի անկախությունից հետո այդ պատմությունը վեր հանվեց, փրկված օրինակները արխիվից հանվեցին եւ անհրաժեշտություն առաջացավ նորը տպելու, քանի որ հներն այլեւս իրենց որակով չէին համապատասխանում պահանջվող չափանիշներին: Նոր սերունդը «Նռան գույնը» մեծ էկրանին չի տեսել, այժմ արդեն ունենք ֆիլմի ամբողջական ժապավենը, որը եւ ցուցադրեցինք փառատոնի փակման օրը», ասաց Սուսաննա Հարությունյանը:

Կինոհանդիսատեսի համար այս տարի հայտնություն էր նաեւ հայ կինոռեժիսորներ Բագրատ Հովհաննիսյանի եւ Արման Մանարյանի ֆիլմերի հետահայաց ցուցադրությունը: «Հնձան» ֆիլմը ուղղակի ապշեցրել էր շատերին, մարդիկ դժվարանում էին հավատալ, որ այդպիսի կինոռեժիսոր ենք ունեցել», հավելեց Սուսաննա Հարությունյանը:

Իսկ Արման Մանարյանի նկարահանած «Ընկեր Փանջունի» ֆիլմը կարծես հենց մեր օրերի համար է ստեղծված, թեպետ Երվանդ Օտյանի սատիրան ժամանակի սահմաններից դուրս է, սակայն ֆիլմը դիտելիս ապշում ես կերպարների այդօրինակ արդիականությունից:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

# ՓՈՔՐ ԵՐԿՐԻ ՀԱՍՈՒՆ ՊՏՈՒՂԸ

Կինոփառատոն ունենալը հրաշալի միջոց է հայաստանցի կինոհանդիսատեսին ցույց տալու այն ֆիլմերը, որոնք չեն ցուցադրվում կինոթատրոններում եւ հեռուստատեսությամբ: Հենց դրա համար են ստեղծվում կինոփառատոնները:

«Ոսկե ծիրանի» գոյությունը օգտավետ է նաեւ երիտասարդ կինոբեմադրիչների համար ճանապարհ բացելու եւ կինոարտադրություն զարգացնելու առումով: Փառատոնի շնորհիվ տարբեր երկրներից եկած մարդիկ հետաքրքրվում են Հայաստանով, ձգտում են համատեղ արտադրության ֆիլմեր ստեղծել, իսկ դրա համար անհրաժեշտ է բազում դժվարություններ հարթել», ասաց Էրիկ Նազարյանը:

Ժյուրիի անդամ լինելը բավականին ծանր գործ է, պետք է դիտել մրցույթում ընդգրկված բոլոր ֆիլմերը, հիմնավորել դրանց ուժեղ եւ թույլ կողմերը: Ահա թե ինչու ժամանակ չի մնացել փառատոնային մյուս ֆիլմերը դիտելու, հասցրել է դիտել միայն երկուսը.

«Հարություն Խաչատրյանի «Սահմանը» շատ հավանեցի, իսկապես մարդասիրական եւ քաջ ֆիլմ է»: Մեծ էկրանի վրա առաջին անգամ դիտեցի Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը» եւ չափազանց ուժգին տպավորություն ստացա: Ֆիլմի հնչողությունն ուղղակի արտակարգ էր», ասաց Էրիկը:

Միջազգային վավերագրական ֆիլմերի ժյուրի անդամները նույնպես գոհ էին ներկայացված ֆիլմերի ընդհանուր մակարդակից, որն էլ դյուրացրել է լավագույն ֆիլմի ընտրությունը: Էկումենիկ ժյուրիի կազմում Գեւորգ աբեղա Սարոյանի ներկայությունը հյուրերի համար վկայություն է եղել, որ Հայ առաքելական եկեղեցին բաց կառույց է, Եվրոպայի քրիստոնեական եկեղեցիների հետ հոգեւոր սերտ կապերով եւ բարձր գաղափարներով: Գեւորգ աբեղան ասել է, որ Սեւանի Վազգենյան դպրանոցում, որի տեսուչն է ինքը, նախատեսում է անցկացնել կինոդասընթացներ: Էկումենիկ ժյուրին առանձնահատուկ տեղ է հատկացնում այն երկրներին, որոնց կինոն ճանաչված չէ աշխարհում, փնտրում եւ տարածում է հոգեւոր արժեքներ՝ նպաստելով միջմշակութային երկխոսություններին:

# ՈՍԿԵ ԾԻՐԱՆ

## Միջազգային խաղարկային ֆիլմերի մրցույթ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակը

### «Մյուս ափը» Գեորգի Օվաշվիլի, Վրաստան-Ղազախստան



Կյանքը շատ խոչընդոտներ է հարուցում 12-ամյա տղայի ճանապարհին: Նա պատկանում է այն սերնդին, որը քաղաքացիական պատերազմի պատճառով տեղահանվել է Աբխազիայի ամենագեղեցիկ վայրերից: Այդ պատերազմն ամեն ինչ խլել է Թեդոյից, նույնիսկ՝ հույսը:

«Փորձել ենք ցույց տալ կյանքն ինչպես որ է: Մեր տարածաշրջանը լի է հակամարտություններով, բայց ինչ կարող ենք անել, մենք ապրում ենք այս հողի վրա եւ պետք է փորձենք հասկանալ միմյանց: Ես հավատում եմ, որ կարելի է խաղաղ ապրել: Կամենում ենք, թե՝ ոչ, մենք պարտավոր ենք կողք կողքի ապրել», ասում է Օվաշվիլին:

«Արծաթե ծիրան» հատուկ մրցանակը



### «Քերծվածք» Միխալ Ռոսա, Լեհաստան

Ամուսնացած զույգը հաշտ ու համերաշխ ապրել է երկար տարիներ, բայց մի օր դարձել է անցյալի գերին: Կասկած կա, որ ամուսիններից մեկը համագործակցել է գաղտնի ոստիկանության հետ: Նրանք ի վիճակի չեն համակերպվել դրա հետ: Ինչպե՞ս վարվել կասկածների հետ, որ աճում են եւ ահագնանում՝ ամեն ինչ դեպի խորտակում տանելով:

Ժյուրիի նախագահ Կոհեյ Օգուրիի հատուկ մրցանակը

### «Աշուն» Օզջան Ալփեր, Թուրքիա



«Ֆիլմը իմ ու իմ սերնդակիցների մասին է: Թեպետ սցենարն ամբողջովին հորինված է, սակայն սյուժեն իրական կյանքից է: Չնայած իմ կյանքում այդքան բարդություններ չեն եղել, որքան իմ ֆիլմի հերոսի՝ Յուսուֆի, բայց ունեմ բազմաթիվ ընկերներ տառապանք նույն բովով անցած: Քանի որ իմ հերոսը համշենահայ է, ֆիլմի համար ընտրեցի Համշենի լեզուն: Մի քանի տարի առաջ Թուրքիայում այսպիսի ֆիլմ նկարահանելն անհնարին էր, հիմա բավականին առաջընթաց է նկատվում», ասում է Ալփերը:

### Միջազգային խաղարկային ֆիլմերի ժյուրի

***ժյուրիի նախագահ Կոհեյ Օգուրի (Ճապոնիա), անդամներ՝ Ալբերտ Վիդերշպիլ (Գերմանիա), Պակո Պոչ (Իսպանիա), Էրիկ Պողոսյան (Մ. Նահանգներ), Նանա Ջորջաձե (Վրաստան), Արսինե Խանջյան (Կանադա)***

## Միջազգային վավերագրական ֆիլմերի մրցույթ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ

### «Բիրմացի վիջեյը» Անդերս Օսթերգորդ, Դանիա



Ձեռքի փոքրիկ տեսախցիկով ծածուկ զինված բիրմացի վիջեյները (տեսալրագրողներ) ապահովում են լուրերի հոսքն իրենց փակ երկրից, խիզախում են կտտանքների ենթարկվել ու հայտնվել բանտում: Նրանց նյութերը գաղտնի դուրս են բերվում երկրից եւ հեռարձակվում արբանյակային կապով: 27-ամյա Ջոշուան դառնում է լրահավաքների խմբի մարտավարական առաջնորդը, երբ բուդդայական վանականները 2007-ի սեպտեմբերին գլխավորում են զանգվածային ապստամբությունը:

«Արծաթե ծիրան» հատուկ մրցանակ

### «Ողջերը» Սերգեյ Բուկովսկի, Ուկրաինա



«...Ֆիլմը նկարահանելուց երկու խնդիր էինք դրել մեր առջեւ, նախ՝ Ուկրաինայում 1933-ին կատարված ողբերգությունը ներկայացնել համաշխարհային կոնտեքստում, իսկ երկրորդը, ըստ էության, ավելի անձնական է», ասում է Բուկովսկին: Թեեւ ֆիլմում չի նշվում ցեղասպանություն բառը, ինքը չի հավակնում, որ 1933-ի դեպքերը միջազգայնորեն որակվեն այդպես, իրականում, դա հենց ցեղասպանություն էր...

Ժյուրիի հատուկ մրցանակ

### «Մալեգաոնի գերմարդիկ» Ֆայզա Ահմադ Խան, Հնդկաստան



Ալեքսանդր Ռոդնյանսկի (Ռուսաստան), ժյուրիի նախագահ

Միջազգային վավերագրական ֆիլմերի ժյուրի՝ Յան Հայդն Սմիթ (Մեծ Բրիտանիա), Մայքլ Վիդերման (Գերմանիա), Էնիս Ռիզա (Թուրքիա), Արտյոմ Մելքումյան (Հայաստան)

## «Հայկական համայնապատկեր» մրցույթ

«Ոսկե ծիրան» գլխավոր մրցանակ

### «Սիրով եւ երախտագիտությամբ» Արկա Մանուկյան, Հայաստան



Երեք տակառագործ եղբայրների մասին է, ովքեր տոհմաբար կրում են այս արհեստն ու նախաստեղծ են համարում դա: Իրենց հետնորդներին փոխանցում են իրենց հորից ու պապից փոխանցված սովորույթները, ասույթները ու սրամտորեն իրենց փոքրիկ աշխարհը համարում են մեկը նրանցից, առանց որի այս մեծ աշխարհը գոյություն ունենալ չի կարող, իսկ շատ չանցած՝ խոր ողջախոհությամբ օրհնում են այս մեծ ու խորհրդավոր աշխարհը, առանց որի իրենց փոքրիկ ու հրաշալի աշխարհը ոչինչ կթվա:

Ժյուրիի դիպլոմ

### «Կովկասցի ազգականուհին» Լեւոն Քալանթար, Հայաստան



Ղարաբաղյան պատերազմի հետ անքով ադրբեջանուհի Զինայի ազգականները ցրվել են աշխարհով մեկ: Նա մոր հետ շարունակում է բնակվել Ղարաբաղում, իսկ մի հորեղբայրն ապրում է Ուկրաինայում, մյուսը՝ Բաքվում: Ֆիլմը պատմում է օտար հողում ազգականների հանդիպման մասին, որոնք 16 տարի չեն տեսել իրար:

Ժյուրիի դիպլոմ

### «Մեր աշխարհը» Ֆրեդերիկ Բալեզջյան, Ֆրանսիա

Մարկը փախստական հանցագործ է, որը խույս է տվել թե օրենքից, թե հանցակիցներից: Նա ագարակատուն է վարձում փոքրիկ գյուղական համայնքում, ուր եւ դարան է մտնում 12-ամյա որդու՝ Նոյի հետ: Մարկը վստահ է, որ բազմաթիվ թշնամիներից մեկնումեկը կգա իր հետեւից, ուստի Նոյին վարժեցնում է, որպեսզի իրեն օգնի դուրս շպրտել նրան, ով կխցկվի իրենց նոր հանգրվանը:

Ժյուրիի նախագահ Հայկ Բայյան (Նիդեռլանդներ), Էրիկ Նազարյան (Մ.Նահանգներ), Նորիկ Քեշիշյան (Գերմանիա), Անեսա Երզնկյան (Հայաստան), Գրիգոր Հարությունյան (Հայաստան)



FIPRESCI (Կինոքննադատների միջազգային ֆեդերացիա) մրցանակ

### Օզջան Ալփեր «Աշուն», Թուրքիա



Ժյուրիի կազմը՝ Ժան Մաքս Մեժան (Ֆրանսիա), Ջովաննի Օտտոնե (Իտալիա)

Արծվի Բախչինյան (Հայաստան)

Էկումենիկ ժյուրիի մրցանակ

### «Մյուս ափը» Գեորգի Օվաշվիլի, Վրաստան, Ղազախստան

Ժյուրիի կազմը՝ Գվիդո Կոնվենտս (Բելգիա), Դենիս Մյուլլեր (Ֆրանսիա), Գեւորգ աբեղա Սարոյան (Հայաստան):



# ՈՍԿԵ ԾԻՐԱՆ

# Երեւանյան 4 աքանշելի պրեմիերաներ

***Ամեն մի փառատոն կինոհանդիսատեսի համար կինոտոն է դառնում նախ եւ առաջ իր ցուցադրած ֆիլմերով: Այդ առումով այս տարվա «Ոսկե ծիրանը» եւս իր երկրպագուներին պարգեւեց անմոռաց կինոդիտումներ՝ հագեցնելով իսկական կինոյի վարպետների եւ նրանց ստեղծած ֆիլմերի հետ շփվելու ծարավը: Հետահայաց ցուցադրություններից բացի կինոհանդիսատեսը հնարավորություն ստացավ առաջին անգամ դիտելու հետեւյալ ֆիլմերը:***

## Սերգեյ Սոլովյով «ԱՍՍԱ -2»



«Ասսա 2»-ը գլխավորապես վերջին 20 տարում կատարված փոփոխությունների մասին է, այն փոփոխությունների, որ երազում էին «Ասսա»-ի հերոսները: Դրանք իրականություն են դարձել, բայց անհնար է միանշանակորեն ասել՝ դրակա՞ն են, թե՞ բացասական: Հիմնական գործողությանը զուգահեռ՝ գրեթե բոլոր հերոսները զբաղված են «Աննա Կարենինա» ֆիլմի նկարահանումներով, որտեղ «Ասսա»-ի հերոսուհի Ալիկա Ալդանովան կատարում է Աննայի դերը:

## Ֆրենսիս Ֆորդ Կոպոլա. «Տետրո»

17-ամյա Բեննին գալիս է Բուենոս Այրես՝ իր ավագ եղբորը որոնելու, որն ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ անհետացել է ու երդվել, թե երբեք չի հանդիպի հարազատներից որեւէ մեկի հետ: Իտալացի տարագիրների ընտանիքը հաստատվել է Արգենտինայում, բայց տիրական հոր՝ հայտնի դիրիժոր Կարլոյի երաժշտական հաջողությունից հետո, տեղափոխվել է Նյու Յորք: Երբ Բեննին գտնում է եղբորը՝ փայլուն, բայց մելամաղձոտ գրող Տետրոյին, վերջինս նրան ամենեւին էլ գրկաբաց չի ընդունում: Բեննիի պատանեկության կուռքը, նրա հրաշալի եղբայրը այժմ ինքնակործանման ուղին բռնած չորուցամաք մարդ է, որը փոխել է անունը եւ այլեւս չի գրում: Նա հենակներով է մի պատահարից հետո, որի ժամանակ շշմել է մոտեցող ավտոբուսի լույսերից: Բեննին եղբորից մերժվելով, մխիթարություն է գտնում նրա ընկերուհու՝ Միրանդայի մոտ: Բոհեմական Լա Բոկայի մոտակայքի նրանց փոքրիկ բնակարանում օթեւանելով, Բեննին հայտնաբերում է Տետրոյի թաքուն գրվածքը, որը ջրի երես է հանում ընտանիքից հրաժարվելու պատճառը: Բեննիին սրտաբաց ընդունած Միրանդան տեսնում է նրան գրվածքը կարդալիս եւ զգուշացնում, որ դա կարող է Տետրոյին զայրացնել: Բեննին պնդում է, թե պետք է գրի Տետրոյի անավարտ պիեսի վերջաբանը: Երբ մի պատահարից հետո նա հայտնվում է հիվանդանոցում, Միրանդան փափկում է եւ ձեռագիրը ծածուկ բերում: Տետրոն հայտնաբերում է Բեննիի գրածը, դրան կատաղի վեճ է հետեւում: Մեծ գրաքննադատ Միայնակը կարդում է պիեսը եւ ընտրում Արգենտինայի ամենակարեւոր գրական մրցանակներից մեկի եզրափակիչ փուլի համար, որ պետք է կայանա Պատագոնիայի նրա կալվածքում: Մեկնելով Պատագոնիա՝ Տետրոն անհետանում է ճանապարհին, իսկ Միրանդան սկսում է փնտրել նրան: Մրցանակաբաշխության ժամանակ Տետրոն հանկարծակի հայտնվում է, եւ եղբայրները վերապրում են համատեղ անցյալի ճշմարտությունը: Այդ նույն երեկո գալիս է հոր մահվան լուրը: Ցրված ընտանիքը հավաքվում է Բուենոս Այրեսում կատարվելիք հուղարկավորությանը, եւ խռովահար Բեննին անհետանում է գիշերվա մեջ փայլելով մեքենաների կուրացնող լույսերի տակ: Տետրոն հետեւում է եղբորն ու փրկում նրան՝ վերջապես ընդունելով, որ իրենք հարազատներ են:





## Դանիել Թոմսոն. «Կանոնները փոխվել են»

Ճաշկերույթի ժամանակ մարդիկ փայլում են արտաքնապես, զվարճալի պատմություններ պատմում, ծիծաղում, կեցվածք ընդունում, ընկնում են հիշողությունների գիրկը... Մտահոգությունը թաքցնում են հումորի, իսկ ցավը՝ զսպում են ծիծաղի պոռթկումներով: Եվ մի քանի ժամ անց արդեն մտերմանում են: Դա է կարեւորը, եթե շարժվում ես ճիշտ կանոններով, հարգում մյուս հյուրերին, ջերմ ես, կեղծավոր եւ կենսուրախ, հույս կա, որ երեկոն լավ կանցնի... Բայց դիմակները հանվում են տան ճանապարհին:

## Հարություն Խաչատրյան. «Սահմանը»

Դեպքերը ծավալվում են հետխորհրդային շրջանում՝ հայ-ադրբեջանական հակամարտությունից հետո: Ֆիլմը պատմում է հակամարտության գոտու մերձակայքում գտնվող մի գյուղի մասին, որտեղ մի ամերիկահայ բարերար բարեգործական ճաշարան է բացել, իսկ մոտակա ագարակում աշխատում են տարբեր վայրերից եկած փախստականներ: Գյուղացիները մի կիսավայրենացած ու կիսակենդանի գոմեշ են գտնում ճահճուտում: Գոմեշին բերում են ագարակ, որտեղ հսկող շները, դեսուդենից հավաքված կենդանիները, պատերազմից հոգնած ֆերմերներն ու փախստականները նրան սկսում են վերաբերվել որպես օտարականի եւ թշնամու: Գյուղական կյանքն ամբողջ տարվա ընթացքում երեւում է գոմեշի աչքերով: Անցնում է ամառը, գալիս է աշունը, ապա՝ ձմեռը: Եղանակները փոխվում են, բայց գյուղում շարունակվում է նույն միապաղաղ կյանքը: Հետեւելով գոմեշին՝ դիտողը ականատես է դառնում գյուղի եւ ագարակի շրջակա կյանքին:



# ԿԻՆՈՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՋԵՐՄ ՈՒ ԱՆԿԱՇԿԱՌ ԽՈՍՔԵՐ



Երեկոյան ժամը 8-ը չկար (կինոդիտումը նախատեսված էր այդ ժամին), սակայն Մոսկվա կինոթատրոնի դահլիճը լեփ-լեցուն էր: Հանդիսատեսը սպասում էր Օզջան Ալփերիի «Աշուն» ֆիլմի պրեմիերային: Կինոթատրոնի միջանցքներում՝ հատկապես երիտասարդները, քայլում ու միաժամանակ քննարկում էին, թե ինչպիսին պետք է լինի Թուրքիայում բնակվող համշենցի ռեժիսորի ստեղծագործությունը:

22-ամյա **Անի Գալստյանը** սովորում է Երեւանի Թատրոնի եւ Կինոյի պետական համալսարանում, իրեն համարում «Ոսկե ծիրան» կինոփառատոնի հավատարիմ երկրպագու. «Հայաստանում կինոյի զարգացումը դանդաղ է ընթանում, հնարավորություններ չկան հանդիպելու եվրոպացի արդեն դասական դարձած ռեժիսորների հետ, իսկ կինոփառատոնի շնորհիվ ոչ միայն տեսնում ենք նրանց ֆիլմերը, այլեւ անվճար մասնակցում վարպետության դասերին: Երկու ժամվա ընթացքում այնքան բան ես սովորում, ընկալում, ճանաչում, որ հաստատ չես կարող սովորել համալսարանում դասախոսությունների ժամանակ»:

42-ամյա հաշվապահ **Կարեն Ավետիսյանին** էլ կինոթատրոն էր բերել հետաքրքրությունը: «Կինոյի սիրահար եմ, սակայն Ալփերիի մասին չէի լսել: Դիտումից հետո շատ բան հասկացա: Գիտակցությունը, որ Թուրքիայում բռնությունների ենթարկվելով երիտասարդները չեն մոռանում, որ հայ են ու ստեղծագործում են հայերենով՝ հրաշալի է: Սակայն առավել կարեւոր ձեռքբերում եմ համարում, որ «Ոսկե ծիրանի» շնորհիվ հաստատվում է կապ արտասահմանում բնակվող տաղանդավոր երիտասարդների հետ: Կազմակերպիչներն ըմբռնել են, որ առանց Հայաստանի սփյուռքը չի կարող գոյատեւել ու հակառակը, եւ ֆիլմարվեստի շնորհիվ կարողացել են հաստատուն կապ ստեղծել երկու հայրենիքների միջեւ»:

Տիկնիկային թատրոնում նախատեսված Սերգեյ Սոլովյովի վարպետության դասը սկսվեց բուռն ծափահարություններով, հաջորդաբար հարցեր, քննարկումներ, ու կրկին ծափահարություններ, ողջույններ: Հարցերը շատ էին, պատասխանները հետաքրքրական, նոր, երբեմն ապշեցնող: «Ասսա 2»-ից մինչեւ «Աննա Կարենինա», ֆիլմերի համար երաժշտության ընտրություն, դերասանների հետ աշխատանք, քասթինգ եւ էլի մի քանի տասնյակ հարցեր:

«Շնորհակալություն «Ոսկե ծիրան կինոփառատոնին, որ կարողացա այսպիսի հրաշալի հանդիսատեսի հետ հանդիպել», խոսքն այսպես ավարտեց **Սոլովյովը:**

«Շնորհակալություն «Ոսկե ծիրանին» երիտասարդության երազանքս իրագործելու համար», նշեց 45-ամյա **Հռիփսիմեն:** «Մեծացել եմ ԱՍՍԱ 2 ֆիլմի երաժշտության տակ ու հիմա Երեւանում հանդիպում եմ Սոլովյովին: Աղջկաս էլ եմ բերել նրա վարպետության դասին: Հիմա Երեւանում քչերը գիտեն այդ տաղանդավոր ռեժիսորի մասին, քչերն են տեսել նրա ֆիլմերը, սակայն գովելի է, որ կան հայ արդի կինոյով մտահոգվողներ: Իսկ ապագան պետք է կառուցել անցյալի վրա, սերտելով անցյալի հաղթանակներն ու նվաճումները», ասաց նա:

«Հրաշալի ֆիլմ էր՝ մարդկային ողբերգություն, որ բարեբախտաբար ավարտվեց համերաշխությամբ: «Տետրոն» կինոփառատոնի շրջանակներում արդեն 11-րդ ֆիլմն է, որ դիտել եմ: Բոլորն էլ շատ լավն էին, հատկապես հետահայաց ցուցադրությունները: Հիացած եմ ճապոնական ֆիլմարվեստով, մեր գիտակցության մեջ ճապոնական ֆիլմերն այլ կերպ էին դրոշմված, սակայն Օզուիի ֆիլմերը դարձան բացահայտում: Իհարկե, կային կազմակերպչական թերություններ՝ մասնավորապես թարգմանության հետ կապված, երբեմն ֆիլմերը նախատեսված ժամից ուշ էին սկսվում, սակայն այս ամբողջ մթնոլորտի մեջ դրանք այնքան աննշան մանրուքներ էին, որ կարիք չկա դրանց վրա հենվելու», ասաց 32-ամյա **Սոնան**:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

